ԿԻՄԵՐԱԿԱՆ ՈՒ ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՈՒՐԱՐՏՈՒԻ ՈՒ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՔՈՉՎՈՐՆԵՐԻ ԴԵՄ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

Մ. թ. ա. VIII դարի կեսերից Ուրարտու պետությունը, ապա Ասորեստանը, հարկադրված էին կատաղի պայքար մղել հյուսիսից դեպի իրենց տերիտորիաները ներխուժող կիմերների ու սկյութների քոչվոր ցեղերի դեմ. դա սկիզբը հանդիսացավ այդ պետությունների անկման և պատմության թատերաբեմ հանդես գալուն նոր ժողովուրդների՝ մարերի, պարսիկների և հայերի։

Անդրկովկասի և մասնավորապես Հայկական լեռնաշխարհի սահմանները քոչվոր իրանալեզու ցեղերի ներխուժումների հարցում պարզություն մտցնելու համար պետք է որոշակիորեն սահմանազատել այդ ցեղերի ներխուժման երեք ալիք։ Մ. թ. ա. VIII—VII դդ. Ուրարտու թագավորության դեմ ասպատակություններ կատարող (գերազանցապես կիմերական) ցեղերի արշավանքների առաջին ալիքը եղել է մ. թ. ա. VIII դարում (մինչ 720-ական թթ., հնարավոր է անգամ 750-ական թթ.)։ Արշավանքների երկրորդ ալիքը (գերազանցապես սկյութական ցեղերի) սկսվել է մ. թ. ա. VIII—VII դդ. սահմանագլխին և շարունակվել մինչև VII դ. 80-ական թթ.։ Ըստ Հերոդոտի (IV, 11) սկյութների շարժումը պայմանավորված էր նրանով, որ նրանց նեղում էին մասսագետները, այսինքն՝ «մեծ սակերը»։ Սկյութները կարողանում են նույնիսկ իրենց հարկատու դարձնել Մարական տերությունը և Ուրարտուն, ուր նրանք իշխում են 28 տարի։ Վերջապես, սկյութական և սարմատական ցեղերի արշավանքների երրորդ ալիքը սկսվել է մ. թ. ա. V դ. և տևել մինչև IV դ. կեսերը. դա Աքեմենյանների հին պարսկական պետության տիրապետության շրջանն էր[1]*։*

Հյուսիսից քոչվոր ցեղերի ներխուժումներ տեղի են ունեցել նաև հետագա ժամանակաշրջանում, երբ հայ ժողովրդի կազմավորման պրոցեսն արդեն ավարտվել էր, բայց դրանք այնպես նկատելիորեն չէին ազդում Հայաստանի բնակչության էթնիկական կերպարի վրա, ինչպես կիմերական ու սկյութական ցեղերի առաջին ներխուժումները։

Մարքսիզմի կլասիկները ցույց են տալիս, որ նման զանգվածային գաղթերը պայմանավորված էին ոչ միայն որոշ ցեղերի վրա հարևան ցեղերի գործադրած ճնշմամբ, այլև նրանով, որ տնտեսական ու սոցիալական զարգացման որոշակի աստիճանում այդպիսի գաղթի անհրաժեշտություն էր երևան գալիս։

Հնագույն ժամանակներից ի վեր հսկայական տարածության վրա՝ Թրակիայից ու հյուսիս-սևծովյան տափաստաններից մինչև Կովկաս ու Միջին Ասիա ապրում էին տոհմական կարգերի զարգացման տարբեր աստիճաններում

---

1 *Տե՛ս* В. В. Струве, Новые данные истории Армении, засвидетельствованные Бехистунской надписью, *ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 8, էջ 38։*

գտնվող քոչվոր ցեղեր։ Խոսելով ցեղերի ու ժողովուրդների տեղաշարժերի նախապայմանների մասին, մարքսիզմի հիմնադիրները մատնանշում էին, որ «...բնակչության գերաճի ճնշումը արտադրողական ուժերի վրա հարկադրում էր բարբարոսներին՝ Ասիայի սարահարթներից ներխուժել հնագույն քաղաքակիրթ պետությունները... դրանք խաշնարած ցեղեր էին, որսորդներ ու ռազմիկներ. արտադրության նրանց եղանակը պահանջում էր հսկայական հողային տարածություններ յուրաքանչյուր անհատի համար... Երբ նրանց թիվն ավելանում էր, ապա պակասում էր յուրաքանչյուրի արտադրական տարածությունը։ Այդ պատճառով էլ ավելորդ բնակչությունը հարկադրված էր լինում ձեռնարկելու այն մեծ, հեքիաթային թափառումները, որոնք հիմք դրեցին ժողովուրդների գոյացմանը հին և նոր Եվրոպայում»[2]։ Ահա թե որտեղ պետք է փնտրել դեպի հարավ քոչվոր ցեղերի արշավանքները պայմանավորող տնտեսական նախադրյալները։

Ա. Ի. Արտամոնովը, հնագիտական բազմապիսի նյութերի հիման վրա, բերում է այն նախադրյալները, որոնք հիմք հանդիսացան դեպի հարավ կիմերական ցեղերի ներխուժման համար։ «Ծափաստաններում քոչվոր անասնապահական տնտեսության առաջացման հետևանքով,— գրում է նա,— այնտեղ գոյանում են ռազմաշունչ հորդաներ, որոնց համար թալանի հետ զուգակցված պատերազմը դառնում է յուրատեսակ արտադրություն։ Փոխանակության անզարգացածության պայմաններում մասնագիտացված անասնապահական քոչվոր տնտեսությունը չէր կարող յոլա գնալ առանց պատերազմների, որոնք փոխարինում էին փոխանակությանը։ Մասնավոր սեփականության ամրապնդումն իր հերթին բորբոքում էր հարստանալու բաղձանքը, որը ցեղակիցների կամ ստրուկների շահագործման եղանակների անզարգացածության պայմաններում կարող էր հագուրդ ստանալ միայն հարևանների պատերազմական թալանի միջոցով»[3]։ Այդ հարձակումների օբյեկտ են դառնում Առաջավոր Ասիայի երկրները՝ Անդրկովկասը, Իրանական բարձրավանդակի հյուսիսային մասը, Հայկական լեռնաշխարհը և Փոքր Ասիան։

* * *

Մ. թ. ա. VIII դարի երկրորդ կեսին, Կուբան գետի ստորին հոսանքի շրջանի ինչ-որ տեղից կիմերները շարժվում են դեպի հարավ և Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի լեռնանցքներով (Դարյալի, Ալագիր և այլն) ներխուժում Անդրկովկաս ու գրավում Կուր-Արաքսյան հարթավայրի ձմեռային արոտները. այստեղից նրանք շարունակում են տարածվել դեպի հարավ՝ դեպի Հայկական լեռնաշխարհը։

Կիմերների մասին ամենավաղ տեղեկությունները տալիս են Սարգոն II-ի (722—705) ժամանակաշրջանի ասսուրական աղբյուրները՝ Ուրարտուի հյուսիսային սահմանները կիմերական հորդաների ներխուժման կապակցությամբ։ Ասորեստանցիները նրանց անվանում են «գիմիռա», նաև «ուման մանդա», որ

---

[2] К. Маркс и Ф. Энгельс, Революционная эмиграция в Лондоне. Эмиграция из Англии, Сочинения, том IX, 1932, էջ 278—279։

[3] А. И. Артамонов, Происхождение славян, Л., 1950, էջ 27—28։

ամենաընդհանուր իմաստով նշանակում է «բարբարոս», «բարբարոսական հորդա»[4]։

Կիմերների մասին հնագույն տեղեկությունը դա Ուրարտուում գտնվող ասորեստանյան հետախույզ Աշշուրիսուայի զեկույցն է Սարգոն II-ին, որտեղ հիշատակվում է Գամիր երկիրը, այսինքն կիմերների բնակության շրջանը[5]։

Այս վկայության հիման վրա գիտության մեջ իշխում է այն կարծիքը, թե կիմերները հենց սկզբից բնակություն են հաստատել հետագայի Կապադովկիայի տերիտորիայում (որ հայտնի էր հին հայերին նրանց անունով՝ Գամիրք), թե իբր այդ երկրի մոտերքում Սարգոն II-ը ընդհարվել է նրանց հետ։ Իսկ իրականում, ինչպես ստորև կտեսնենք, կիմերներն առաջին անգամ Փոքր Ասիայի երկրներն են թափանցել մ. թ. ա. 676—674 թթ., ուրարտական թագավոր Ռուսա II-ի արշավանքների ժամանակ, որպես նրա դաշնակիցներ։ Մինչ այդ մարերը և ասորեստանցիները կիմերների հետ շփում են ունեցել Ուրմիա լճի շրջանում, Ուրարտու պետության հարավ-արևելյան սահմանների մոտ։

Աշշուրիսուայի՝ Սարգոն II-ին հղած զեկույցի տեքստի մեջ հետաքրքրող մասում կարդում ենք. «Գուրիանիա [երկիրը] և Նագիու[6] երկիրը [գտնվում են] Ուրարտու երկրի և Գամիռայի միջև։ Սա հարկ է տալիս ուրարտական թագավորին»[7]։ Գուրիանիա երկիրը համապատասխանում է ուրարտական արձանագրությունների Կուլիանիին կամ Կուրիանիին և տեղորոշվում է Հայկական ՍՍՀ Արթիկի շրջանում[8]։ Այստեղ ապրում էր գուրանիացիների ցեղը, որը հայտնի էր Ստրաբոնին։ «Ասում են նաև, որ թրակիացիների մի մասը, որ կոչվում է սարապարներ (σαραπαρας) կամ գլուխ հատողներ, բնակվում էր Հայաստանից այն կողմ, գուրանիացիների (Γουραινοι) և մարերի հարևանությամբ»[9]։ Սարապար բառը, գլուխ հատողներ նշանակությամբ, իրանական Կամսար անվան իմաստավորումն է, որ հետագայում դարձավ Կամսարական տոհմի ժառանգական տիտղոսը։ Ամենայն հավանականությամբ, Արշարունիքում ու Շիրակում (այսինքն գուրանիացիներից արևմուտք) ապրող ցեղի առաջնորդը այն ժամանակ արդեն տոհմային այնպիսի տիտղոս էր կրում, որը իմաստով մոտենում էր պարթևական դարաշրջանի «Կամսար»-ին։ Տվյալ դեպքում պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ սարապարների ցեղը դասվում է թրակիացիների շարքը և, հետևաբար, պետք է կիմերներին ազգակից ցեղ համարվի։

Վերստին անդրադառնալով Աշշուրիսուայի՝ Սարգոն II-ին գրած նամակի տեքստին, հարկ է մատնանշել, որ Գուրիանիի կողքին հիշատակվող Նագիու

---

4 И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, այսուհետև՝ АВИИУ, № 65 (ВДИ, 1951, № 3, էջ 216)։ Կիմերների մասին տե՛ս Л. А. Ельницкий, Киммерийцы и киммерийская культура, ВДИ, 1949, № 3, էջ 14—26։

5 Այդ տեղեկությունները վերաբերում են մ. թ. ա. 722—715 թթ.։ Տե՛ս Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 96—99։

6 Մենք գտնում ենք, որ տվյալ դեպքում սա հատուկ անուն է և ոչ թե «շրջան» հասարակ. անունը երկրի դետերմինատիվով, ինչպես կարծում է Ի. Մ. Դյակոնովը։ Տե՛ս ВДИ, 1951, № 2, էջ 341, ծան 2։

7 ВДИ, 1951, № 2, էջ 341։

8 Պրոֆ. Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը (Հետազոտություն ըստ բնեռագիր աղբյուրների), Երևան, 1940, էջ 109, 175։ Տե՛ս նաև Б. Б. Пиотровский, Ванское царство, էջ 232—233։

9 Strabo, XI, 14, 14.

երկիրը պետք է համապատասխանի հին հայկական Նիգ գավառին (Հայկական ՍՍՀ Ապարանի շրջանը)։ Վերջապես, նշված գեկույցի Գամիռա երկիրը, որը Ուրարտուի հարկատուն էր, ոչ թե Կապադովկիայի տերիտորիան էր, որը Ուրարտուի քաղաքական ազդեցության ոլորտը ներգրավվեց Ռուսա II-ի մ. թ. ա. 676—674 թթ. արշավանքներից հետո, այլ ներկայիս Լենինականի շրջանը (Հայկական ՍՍՀ Ախուրյանի և Ղուկասյանի շրջանները)։ Այս կապակցությամբ հասկանալի է դառնում Կումայրի (վրացերեն՝ Գումբրի) անվան ծագումը. այդ անունը հին հույները տալիս էին ներկայիս Լենինականին[10]։ Հավանաբար այս վայրում է ուրարտական թագավոր Ռուսա I-ը (735—714 թթ.) առաջին անգամ հանդիպել կիմերներին, որոնցից պարտություն է կրել։ Կարծում ենք, որ մ. թ. ա. VIII դարում կիմերների բնակության տերիտորիան չէր սահմանափակվում ներկայիս Լենինականի շրջանով։ Կիմերական ցեղերի հիմնական մասը պետք է բնակվելիս լիներ Ուրարտուի սահմաններից հյուսիս, Փոքր Կովկասի հյուսիսային ու արևելյան լանջերին, ընդհուպ մինչև Արիալեթի լեռներն ու Կուր գետը։

Շուտով կիմերները ստիպված էին լինելու Կուր-Արաքսյան հարթավայրի տերիտորիան զիջել հյուսիսային Կովկասի տափաստաններից Անդրկովկաս ներխուժած սկյութներին։ Վերջիններս գրավում են Կուր-Արաքսյան հարթավայրը, իսկ կիմերներին քշում են Փոքր Կովկասի լեռները, ուր և մնացել են նրանց հետքերը։ «Գմիր-ի» էթնիկական տերմինը պահպանվել է վրացերենում «հերոս», «դյուցազն» իմաստով։ Հետաքրքրական է, որ Թրիալեթիում մեգալիթյան հուշարձանները ժողովուրդն անվանում է გმირთა ციკვეთი «գմիրթա նակվեթի», որ բառացիորեն նշանակում է «գմիրների կերտած», ներկայիս ընկալմամբ՝ «դյուցազունների», «հսկաների» կերտած։

Այս կապակցությամբ հետաքրքրություն է ներկայացնում հենց თრიალეთი Թրիալեթի, հայկ. Թռեղք, անունը (այժմ Ծալկայի շրջանը, Գոմարեթիից հյուսիս)։ Այս անվան ավելի արխաիկ ձևը պետք է լինի «Թրիար», (< *«Թորի+ար»), որը պահպանվել է Պլինիոսի մոտ՝ regio Thriare[11]։ Վրացերենի տեսակետից այս վերջինիս օրինաչափ ձևն է «Թրիալ-եթ-ի»։ Այս նույն էթնիկական անունը պահպանվել է Թարթառ գետի հովտում, հենց այդ գետի անվան հնագույն ձևում՝ Տրտու, Տրտուական և նույն տեղում գտնվող Տոի գավառի անվան մեջ (ուրարտ. Terrani, միջին դարերում Ջրարերդ գավառը)[12]։ Մեջ բերված անուններում պահպանվել է տրերների՝ թրակական ցեղերից մեկի անունը։ Այդ ցեղը մ. թ. ա. VII դ. կեսերին կիմերների հետ միասին մարտնչել է Փոքր Ասիայում։ Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա կարելի է կարծել, որ կիմերների հետ միասին Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ և Անդրկովկաս է ներխուժել տրերների թրակական ցեղը։ Կարելի է նույնիսկ ենթադրել, թե տրերների ցեղը կիմերական ցեղերից մեկն էր։

Եվստաթիոսը, Հոմերոսի «Ոդիսականի» մեկնություններում անդրադառնալով այս ցեղին, մատնանշում է, որ դա «սկյութական ցեղ է, քոչվոր և հյուսիսարնակ, որի մի փոքր մասը (ասում են, որ նրանք կոչվում էին արերներ) Հոմերոսից ոչ շատ առաջ կամ դուցե նրա ժամանակ (այսինքն մ. թ. ա. X—

---

10 С. Т. Еремян, Армения в составе Мидии и Ахеменидской Персии, «История СССР». ч. I—II, М.—Л., 1939, էջ 198։

11 Plin., NH, VI, 26 (ВДИ, 1949, № 2, էջ 296)։

12 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 86։

IX դդ.—Ա. Ե.), շարժվելով Կիմերական Բոսփորից, անցնում է Ասիայի մեծ մասը, գրավում Սարդեսը, ոչնչացնում մագնետներից շատերին, որոնք բնակվում էին Մեանդրոս[13] գետի ափերին ու ներխուժում անգամ Պափլագոնիա և Փոյուգիա. ասում են, որ հենց այդ ժամանակ էլ Միդասը[14] վերջ տվեց իր կյանքին»[15]։

Այսպիսով, վկայակոչված տվյալները ցույց են տալիս, որ տրերները Առաջավոր Ասիայի երկրներն են ներխուժել ոչ միայն Թրակիայի ու Փոքր Ասիայի, այլև (կիմերների նման) Կովկասի ու Անդրկովկասի վրայով։

Ռուսա I-ի օրոք կիմերները Ուրարտուի թշնամիներն էին։ Ինչպես տեսանք, ուրարտական այդ թագավորը չկարողացավ նրանց հաղթել։ Նրանք ներխուժեցին Ուրարտուի հյուսիսային սահմանամերձ շրջանները և բնակություն հաստատեցին ներկայիս Լենինականի շրջանում։ Այդ վայրը ասորեստանյան հետախույզի զեկույցում անվանված է Դամիրա, իսկ ուրարտական արձանագրություններում՝ Իշկիդուլու կամ Իշկիգուլխու։ Կիմերների արշավանքը Ուրարտու պետության ներսում առաջ բերեց խլրտումներ, որոնք օգտագործվեցին Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի կողմից Ռուսա I-ին հարված հասցնելու համար, որ և վերջացավ Ռուսա I-ի կործանմամբ։

Վերջինիս հաջորդի, ուրարտական Արգիշտի II (714—685 թթ.) թագավորի օրոք, ընդհակառակը, ուրարտացիներն ու կիմերները բարի դրացիական հարաբերություններ էին պահպանում։ Իշկիդուլու երկիրը հարկ էր վճարում ուրարտական թագավորին։

Թոփրախ-կալեի (Վանի հյուսիս-արևելյան արվարձանը) պեղումների ժամանակ Լեման-Հաուպտի և Բելքի արշավախմբի հայտնաբերած կավե սալիկի վրայի արձանագրությունը, Լեման-Հաուպտի կարծիքով, Իշկիգուլու երկրի թագավորի նամակն է ուղղված Ռուսա II-ին (685—645)։ Արձանագրության մեջ հաղորդվում է, որ «Սադաշտարան», Իշկիդուլխիի թագավորը, գնայ Մանա երկրի [դեմ]»[16]։

Կիմերների և Ուրարտուի մերձեցումը սերտորեն կապված է սկյութների արշավանքի հետ, որը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել Արդիշտի II-ի (714—685) ղահակալության օրոք։ Սկյութները (նրանց ինքնանունն է «շկուդա»)[17] VIII դարի վերջում Հյուսիսային Կովկասի տափաստաններից Մերձկասպյան ծովեզերքով շարժվում են դեպի հարավ և Դերբենդի անցքով ներխուժում Անդրկովկաս ու հաստատվում Կուր-Արաքսյան հարթավայրում։ Այստեղ բնակվող կիմերական ցեղերը սկյութների ճնշման տակ նահանջում են դեպի Փոքր Կովկասի լեռները և, բնականաբար, ներթափանցում Ուրարտու պետության սահմանները։ Այժմ կիմերները դառնում են ուրարտա-

13 Սարդես և Մագնեզիա քաղաքները գրավվում են լիկիացիների ու տրերների կողմից հավանորեն մ. թ. ա. 646—645 թթ.։ Տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 234։

14 Գորգիոսի որդին, փոյուգիական թագավոր Միդասը ինքնասպանություն գործեց մ. թ. ա. 674 թ., այն բանից հետո, երբ կիմերները (ինչպես կարդվում է այժմ՝ ուրարտացիների հետ միասին) ջախջախեցին նրա թագավորությունը։

15 Евстафий, Обьяснения к «Одиссее» Гомера, ВДИ, 1947, № 1, էջ 292։

16 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, այսուհետև՝ УКН, № 286, էջ 348։

17 Տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, էջ 242—244։ Արևելյան աղբյուրները սկյութներին կոչում են աշգուզա[յ], ասգուզա[յ] կամ իշկուզա[յ]։ Հայկական Ասքանազ ձևը ծագում է հին եբրայերեն 'škuz սխալ գրությունից։ Տե՛ս Ի. Մ. Դյակոնով, նշվ. աշխ., էջ 243։

ցիների բնական դաշնակիցները և նրանց հետ միասին ջանում են թույլ չտալ, որ սկյութները հաստատվեն Ուրարտուի սահմաններում։

Այնուամենայնիվ պետք է ենթադրել, որ Աղստև գետի հովտից սկյութներն անցնում են Փոքր Կովկասի լեռները և ներխուժում Արարատյան դաշտը։ Սրա հետևանքով է, որ կիմերները, սկյութների ճնշման տակ, որպես Ուրարտուի դաշնակիցներ, շարժվում են դեպի հարավ, հաստատվում Ուրմիա լճի արևմտյան եզերքում։ Սակայն սկյութները երկար չէին մնալու Արարատյան դաշտում։ Ըստ երևույթին ուրարտացիները դուրս են մղում նրանց այնտեղից, և Արաքսի միջին հոսանքի հովտից արտաքսվելով, սկյութները հաստատվում են Ուրարտուի սահմաններից դուրս, ներկայիս Օրդուբադի ու Ջուլֆայի շրջանում և էլի դեպի հարավ՝ հավանաբար Ուրմիա լճի արևելյան ափին ու Հաջի-չայ գետի հովտում։ Այս հովիտը հենց ուրարտական արձանագրություններում կոչվում է «Աշքայայի խուբի»[18]։ Այստեղից սկյութներն սկսում են սպառնալ ինչպես Ուրարտուին, այնպես էլ Մանային ու մարերին։

* * *

Ի. Մ. Դյակոնովի կարծիքով մ. թ. ա. հավանորեն 700 թ. մոտերքը Կուր-Արաքսյան հարթավայրի տերիտորիայում և նրանից հարավ, մինչև Սոհունդ լեռնաշղթան ընկած տարածության վրա կազմավորվեց «Աշկուզ», «Աշգուզ» կամ, ըստ ասսուրա-բաբելական ու եվրոպական աղբյուրների՝ «Աշքենազ» սկյութական թագավորությունը[19]։

Իրտնալեղու ժողովուրդները սկյութներին անվանում էին սակեր, իսկ այդ դարաշրջանի հայերը, ինչպես վերը տեսանք՝ skay∠s[a]kay։ Ինչպես երևում է, Կուրի հովտում, ներկայիս Ադրբեջանական ՍՍՀ-ում բնակություն հաստատած սկյութները հայտնի էին որպես սակեր resp. շակեր և նրանց անունով այդ արգավանդ հարթավայրն սկսեց անվանվել *saka—šayana, որ նշանակում է «սակերի բնակության վայր»։ Հավանաբար հենց սա է եղել Սկյութական թագավորության կենտրոնը[20]։ Ի. Մ. Դյակոնովը ենթադրում է, թե *šaka—šayana-ն «Սկյութական թագավորության նախկին տերիտորիայի պաշտոնական մարական անվանումն է եղել»[21]։ Սկյութական թագավորության կենտրոնն, անկասկած, ներկայիս Կիրովաբադի հարթավայրն էր, որը, իբրև առանձին գավառ, կազմավորվող հայ ժողովուրդը նրանց անունով կոչեց Շակաշեն (Šaka-šeyn)[22], իսկ անտիկ աղբյուրներում այն հայտնի է Σακασηνή, Sakasenae անվամբ։ Այդ շրջանի մասին առավել հին տեղեկություններ պահպանվել է Ստրաբոնի մոտ (XI, 8, 4), որը նույնպես «սկյութ» տերմինը օգտագործում է «սակ» իրանական ձևով։ «Սակերը, կիմերների ու տրերների նման, արշավանքներ էին կատարում մերթ դեպի ավելի հեռավոր, մերթ հարևան երկրները։ Այսպես, նրանք գրավեցին Բակտրիանան և Հայաստանում տիրացան լավագույն հողերին, որին թողեցին իրենց անունը՝ Սակասեն. նրանք հասնում

18 УКН, 127, IV, 54. 128. B2, 25, էջ 223, 238 և 224, 239։

19 Հայ պատմական ավանդության մեջ այս անունը հաղորդված է «Ասքանազեան ազգ» ձևով և կիրառվում է հայերի նկատմամբ։ Տե՛ս Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 22։

20 И. М Дьяконов, История Мидии, էջ 246—252, 254։

21 Նույն տեղում։

22 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 73։

էին նաև կապադովկիացիներին և հատկապես Եվքսինին հարևան [կապադովկիացիներին], որոնց այժմ անվանում են պոնտական»։

Մեջբերված փաստերը ցույց են տալիս, որ սկյութները տարածվեցին Մանայում, Ուրմիա լճի արևելյան ափին, իսկ նրանցից հալածված կիմերները ապաստան գտան Ուրարտու պետության հարավ-արևելյան մարզերում, Ուրմիա լճի արևմտյան ափին, ընդհուպ մինչև Խուբուշնա հարթավայրը (ներկ. Ուշնուեի շրջան)։ Առաջավոր Ասիայի այս մասում ստեղծված իրադրությունը արտացոլվել է Հերոդոտի (I, 103) վկայություններում, որոնք հիմնված են հունական այն ավանդության վրա, որի համաձայն կիմերները Անդրկովկաս են թափանցել մեոտիսյան-սկյութական ճանապարհով, սկյութներից հալածվելով և որ կիմերներին հալածող սկյութները շեղվում են ճանապարհից ու դրա հետևանքով հայտնվում Մարաստանում (Հերոդոտ, IV, 12)[3]։

Ինչպես ստորև կտեսնենք, մ. թ. ա. VII դարի վերջում մարերի կողմից ջախջախվելուց հետո սկյութների մեծ մասը վերադառնում է Հյուսիսային Կովկասի և Արևելա-եվրոպական հարթավայրի տափաստանները։ Սակայն սկյութական որոշ ցեղեր մնում են Հայկական լեռնաշխարհում։ Նրանց մասին տեղեկություններ են պահպանվել անտիկ հեղինակների մոտ։ Այդ մասին են վկայում նաև հնագիտական բազմաթիվ տվյալները։ Ինչպես վերը տեսանք, մեզ հասած տեղեկություններից երևում է, որ սկյութները բնակություն են հաստատել նախ և առաջ Կուր գետի ստորին հոսանքի շրջանում, այն տերիտորիայում, որը նրանց անունով կոչվեց Շակաշեն։ Ճիշտ նույն ձևով ներկայիս Նուխի քաղաքի շրջանը հայերի մոտ կոչվել է Շաքե կամ Շաքի[4]։ Այս էթնիկական անվանումն է նկատվում նաև Շիկաքար (Սյունիքում) վայրի անվան մեջ։ Մասսագետների (Μασσαγέται, հայ. մազքութք) սկյութական ցեղը զբաղեցնում էր Մերձկասպյան ցածրավայրի տերիտորիան Դերբենդի անցքից հարավ, որտեղ ժամանակի ընթացքում առաջ եկավ նոր պետական կազմավորում[5]։

* * *

Ստրաբոնը (XI, 8, 4) հիշատակում է նաև «պոնտական սկյութներին»։ Այս անվան տակ նա նկատի ունի Իրիս-Թերմոդոնի վերին հոսանքի շրջանում ապրող սկյութներին, որտեղից նրանք հավանորեն քշել էին բալա կամ պալա ցեղերը և խալյուբներին resp. խալդայներին։ 10000 հույների նահանջի ժամանակ վերջիններս հանդիպում են այդ սկյութներին Ճորոխի վերին հոսանքի շրջանի բարձր լեռնային հարթավայրում, Բաբերդ քաղաքի, Գայլ-գետի (Գելքիտ-չայ) շրջաններում և Պոնտոսի լեռներում՝ ներկայիս Գյումուշխանե քաղաքի շրջանում, որը հռչակված էր արծաթի ու երկաթի հանքերով։ «Անաբազիսում» (IV, 7, 18) Քսենոփոնն այդ ցեղն անվանում է «սկյութեն» Σκυθινοί։ Ըստ երևույթին, հարավից Բաբերդի հարթավայրը երիզող Σκυδίσης կոչվող լեռները իրենց անունն ստացել են այս Σκυθινοί ցեղի անունից։

Գյումուշխանեի և Բաբերդի շրջանները վաղ բյուզանդական հեղինակները անվանում են խալդիա (χαλδία). Հայ հին հեղինակները՝ խաղտիք, ուրարտական արձանագրությունները՝ խալիտու։ Այստեղ ապրել են խալյուբները

---

23 Տե՛ս Nicolas Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, էջ 292—293։

24 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 73։

25 Տե՛ս С. Т. Еремян, Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт, ВДИ, 1967, № 4, էջ 47—58։

կամ խալդայները, որոնք հնուց ի վեր հայտնի էին որպես հմուտ մետաղագործներ։ Հավանական է, որ սկյութենները ձուլված լինեն խալդայների resp. խալյուբների կողմից։ Այդ մասին է վկայում մի ուշագրավ փաստ, որ մեջ ենք բերում ստորև։

Մ. թ. V դարի առաջին կեսին, երբ հայերեն էր թարգմանվում Մակաբայեցիների Երկրորդ գիրքը, 5-րդ գլխի 47-րդ տան՝ εἰ καὶ ἐπὶ Σκύθων ἔλεγον ἀπηλλοίωτο αν ἀκατάγνωστοι դարձվածքը հայ թարգմանիչները թարգմանում են այսպես. «Թէպէտ առաջի խաղտեաց դատ վարէին իրաւ գտանէին»[26]։ Այս համադրությունից տեսնում ենք, որ հին հունարեն տեքստի Σκύθων-ը գրաբարում հաղորդված է խաղտիք—χαλδαιοι տերմինով։ Արդյոք այս փաստը չի՞ վկայում այն մասին, որ թեև սկյութենները արդեն գոյություն չունեին, բայց հայերն այնուամենայնիվ գիտեին, որ նրանք ձուլվել են խալդայ-խալյուրների, Խալդիայի resp. Խաղտիքի բնակիչներին։ Պոնտոսի լեռների գեղատեսիլ կիրճերում, այսպիսով, ապրում էին նաև սկյութական ցեղեր, որոնք ժամանակի ընթացքում ձուլվում են խալյուրներ-խալդայներին։ Սակայն սկյութական ցեղեր բնակվել են նաև Հարևան շրջանում, Ճորոխի հովտում, այդ գետի միջին հոսանքի շրջանում, ուր տեղորոշվում են Պլինիոսի հիշատակած «սակասաններ»։

* * *

Դեպի Առաջավոր Ասիայի երկրները քոչվոր ցեղերի ձեռնարկած արշավանքները է՛լ ավելի սրեցին հին-արևելյան ստրկատիրական պետություններում հասունացող սոցիալական ու տնտեսական հակասությունները, որոնք հրահրում էին խիստ արտահայտված թալանչիական բնույթ ունեցող նորանոր պատերազմներ։ Պատերազմի բնույթն ու նվաճված տերիտորիաների բնակչության զանգվածային վերաբնակեցման սիստեմը նպաստեցին ցեղերի էթնիկական տրոհման ու տարասեռման, խառնման ու խաչաձևման պրոցեսների խորացմանը, որոնք հայ ժողովրդի ծագման տեսակետից նպաստավոր գործոններ հանդիսացան հայկական ցեղերի՝ որպես միասնական ժողովուրդ հետագա համախմբման համար։

Հին արևելյան տերությունների շահերի այս պայքարը գնում էր, ինչպես և նախկինում, Փոքր Ասիայի հարավ-արևելյան մասի և հյուսիսային Ասորիքի երկրամասերի համար։ Մ. թ. ա. IX—VIII դարերից արդեն այստեղ էր գրտնվում հին աշխարհի միջազգային հակասությունների հանգույցը։ Առաջավոր Ասիայի այս մասում էին բախվում երկաթի տարանցիկ առևտրի ելակետային դիրքերին տիրանալու ձգտող Ասորեստանի, Ուրարտուի և Փռյուգիայի շահերը։ Հյուսիսային Ասորիքի և Փոքր Ասիայի հարավ-արևելյան մասի հողագործական և նստակյաց-անասնապահական քաղաքային օազիսների աղնվականական-վաճառականական վերնախավի տնտեսական բարեկեցության հիմքը կազմում էին գլխավորապես երկաթի, ապա նաև պղնձի, արճճի, ոսկու և արծաթի տարանցիկ առևտրից ստացվող հսկայական շահույթները[27]։

X—IX դդ. ընթացքում Ասորիքում ստեղծվում է պետությունների մի խումբ, որն իր ձեռքում էր պահում Առաջավոր Ասիայի երկրների ցամաքային

26 Տե՛ս Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 309։

27 С. М. Бациева, Борьба между Ассирией и Урарту за Сирию, ВДИ, 1953, № 2, էջ 20—22։

ու ծովային ողջ առևտուրը։ IX դարի կեսին արամեական այդ պետությունները միավորվեցին Ասորեստանի դեմ ուղղված երկու խմբավորման մեջ։ Առաջին խմբավորումը «12 թագավորների միությունն էր», որը գլխավորում էր հետևյալ պետությունները՝ Դամասկոս, Համաթ, Իսրայել, Կուե (Դաշտային Կիլիկիա), Մուսրու, Արկի, Արվադ, Ուսանա, Շիանա, արաբական ցեղեր, Ամմոն։ Սակայն Հակաասորեստանյան հիմնական խմբավորումը երկրների այն խումբն էր, որը հայտնի էր Խաթթե ընդհանուր անունով, Կարքեմիշ կենտրոնով։ Այդ երկրներն էին՝ Կարքեմիշ (այլ կերպ Խաթթի, ներկ. Ջերարուլուսի շրջան), Կումմուխ (Կումմախու, անտիկ Կոմագենը), Բիթ-Ագուսի (Արպադ, ներկ. Ռիֆաթը Հալեպից հյուսիս), Սելիդու (Մալաթիա, անտիկ Մելիտենե), Սամալ (Բիթ-Գաբբար, Յահուդի կամ Յահդիա, ներկ. Ջենջիրլի), Խաթթինա, Գուրգում (Մարկասի կամ Բիթ-Պա՝ ալլա, ներկ. Մարաշ)[28]։ Ավելի վաղ այս երկրների խմբի մեջ էր մտնում նաև Ասորեստանի կողմից նվաճված Բիթ-Ագինի (Թիլ-Բարսիբ, ներկ. Թել-Ահմար) պետական կազմավորումը, որը գտնվում էր Կարքեմիշի դիմաց, Եփրատի ձախ ափին։ Նշենք, որ հյուսիս-ասորական արամեական բոլոր այս պետությունների համար բնորոշ էր Լուսնի Սինա աստվածուհու պաշտամունքի ընդհանրությունը (նրա հռչակավոր տաճարը գտնվում էր Խառան քաղաքում)[29]։

Այս շրջանում բացառիկ նշանակություն ուներ Կարքեմիշ քաղաքը։ Նա գլխավորում էր փոքրասիական-միջագետքյան առևտուրը։ Հարավային Ասորիքում նման դեր էր կատարում Դամասկոսը, որը մ. թ. ա. X—VIII դդ. Միջագետքի, Եգիպտոսի և Փյունիկիայի ու Պաղեստինի միջև ընթացող քարավանային առևտրի խոշորագույն կազմակերպիչն էր[30]։ Ինչ վերաբերում է Հյուսիսային Ասորիքի քաղաքներին, ապա դրանք, Կարքեմիշի գլխավորությամբ, մ. թ. ա. IX—VIII դդ. ցամաքային առևտրում խաղում էին այն նույն դերը, ինչ որ փյունիկյան քաղաքները՝ ծովային առևտրում[31]։

Հյուսիս-ասորական քաղաք-պետությունները սերտ կապերի մեջ էին Կիլիկյան Տավրոսի և Անտիտավրոսի խեթական, խուրրիական և խուրրի-հայկական պետական կազմավորումների հետ, որտեղ էլ, հիմնականում, արդյունահանվում էր մ. թ. ա. I հազ. առաջին կեսին առաջավորասիական երկրներում օգտագործվող երկաթը[32]։ Այս երկրները գլխավորում էր Թաբալը (այլ կերպ՝ Բիթ-Բուրուտաշ, Սարոս գետի վերին հոսանքի կիրճում), որը միավորում էր հետևյալ երկրները. Հյուսիսային Խիլակկու (Ծամնդավ գետի կիրճում, հավանաբար ընդգրկում էր նաև Կեսարիա քաղաքի շրջանը), Հարավային Խիլակկու (Քարային Կիլիկիա), Խուբիշնա (հետագայի Կիբիսայի շրջանը), Կամմանու (Կատաոնիա, Կապադովկյան Կոմանա կենտրոնով) և Թիլ-Գարիմու — հայկական ավանդությունների «տունն Թորգոմայ» (ներկ. Գյուրունի շրջանը)։ Երկրների այս խումբը սովորաբար հարում էր Փռյուգիական թագավորությանը, երբեմն էլ՝ Ուրարտուին։

Տարանցիկ առևտրի (գլխավորապես երկաթի) մեջ էր ներգրավվել նաև Հայկական Տավրոսի լեռնային զանգվածի արևմտյան մասը, որի ընդերքը

28 Նույն տեղում, էջ 23։
29 Նույն տեղում, էջ 24։
30 Նույն տեղում, էջ 21։
31 Նույն տեղում, էջ 22—23։
32 Նույն տեղում, էջ 19։

նույնպես հարուստ էր երկաթահանքով։ Այս մասում, ինչպես տեսանք, մ. թ. ա. XII դարում արդեն կազմավորվել էր հայկական ցեղերի կորիզը, և հիմնվել էր Արմե-Շուպրիա միությունը։ Ըստ երևույթին, երկաթի առևտրի միջագետքյան-ասորական մայրուղուն մոտենալու և նրան տիրելու նպատակով է, որ Մենուան (810—771) և նրա հաջորդները ձգտում են ամուր հաստատվել Արմե-Շուպրիա երկրում։ Այս երկրի միջոցով հյուսիս-ասորական քաղաքները առևտրական կապեր են հաստատում Հայկական լեռնաշխարհի ներքին շրջաններում ապրող և երկաթի հանույթով ու մետաղամշակությամբ զբաղվող ցեղերի հետ։ Ներկայումս կարծում են, որ Ուրարտական պետության բարեկեցության ու հզորության արտակարգ արագ վերելքի գործում մեծ դեր է խաղացել տարանցիկ առևտուրը (հիմնականում երկաթի)։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ միաժամանակ էին տեղի ունենում Ուրարտական պետության հզորացումը, Առաջավոր Ասիայում երկաթի դարի սկզբնավորումը և փոքրասիա-ասորական քաղաքների ծաղկումը, ինչպես նաև Առաջավոր Ասիայում գերիշխանության հասնելու համար Ասորեստանի, Ուրարտուի և Փռյուգիայի մղած պայքարը[33]։

Մուսասիր, Խուրուշկիա և Մանա երկրները Ուրարտուի արևելքում կատարում էին այն նույն դերը, ինչ որ հյուսիս-ասորական քաղաք-պետությունները արևմուտքում։ Այս թագավորությունները գտնվում էին հյուսիս-ասորական քաղաքներն ու Ասորեստանը Մերձկասպյան մարզերի և, հավանորեն, Միջին Ասիայի հետ կապող մայրուղու վրա[34]։ Տարանցիկ այս առևտրի շնորհիվ Մուսասիրի թագավորների պալատում կուտակվել էին լաջվարդի և սարդիոնի հսկայական պաշարներ, որոնք հափշտակեցին ասորեստանցիները մ. թ. ա. 714 թ.։ Հայկական Տավրոսի լեռնանցքների և կիրճերի միջոցով Մուսասիրն ու Խուրուշկիան սերտորեն կապված էին Բիայնիլի-Ուրարտուի հետ, որը ձգտում էր իր քաղաքական ազդեցության ոլորտում պահել նրանց։ «Ասսուրա-ուրարտական պայքարի ընթացքում Մուսասիրի և Խուրուշկիայի ունեցած «չեզոք» դիրքը, որը, ըստ երևույթին, համանման էր ասորա-փոքրասիական պետությունների դիրքին, թույլ է տալիս ենթադրելու, որ այս շրջանները հանդիսանում էին Ուրարտուն առաջավորասիական երկրների հետ կապող երկրորդ, արևելյան ուղին, որի դերը մեծացավ այն պահից, երբ Ասորեստանը գրավեց Ասորիքի շրջաններն ու վերացրեց նրանց «չեզոքությունը»[35]։

Գերիշխանության հասնելու համար Առաջավոր Ասիայի խոշորագույն տերությունների մղած պայքարը բարդացավ հյուսիսից վաչկատունների՝ կիմերների և սկյութների քոչվոր ցեղերի ասպարեզ գալով, որոնց արշավանքի զոհերը դարձան առաջին հերթին Ուրարտուն և Մանան։

* * *

Ստորև մենք համառոտակի կանդրադառնանք քաղաքական այն իրադարձություններին, որոնք կատարվել են VII դարի երկրորդ կեսից մինչև VI դարի սկիզբը, երբ վերջնականապես ձևավորվեց հայկական պետությունը և հիմնականում ավարտվեց հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը։

33 Նույն տեղում, էջ 28—29։
34 Г. Масперо, Древняя история народов Востока, М., 1911, էջ 400—401։
35 Ս. Տ. Բացիևա, Նշվ. աշխ., էջ 29։

Ասորեստանը վերստին հզորանում է Թիգլաթպալասար III-ի օրոք (745—727) և իր ուշադրությունը սևեռում է առաջին հերթին Հյուսիսային Ասորիքի հողերի վրա, որոնց հարված էր սպառնում Ուրարտուի և հզորացող Փռյուգիայի կողմից։ Հարուստ Հյուսիսային Ասորիքի գավթումը Ասորեստանի համար իր հետագա գոյության հարցն էր, այդ պատճառով էլ նա ուշի-ուշով հետևում էր Առաջավոր Ասիայի այդ մասում տեղի ունեցող բոլոր փոփոխություններին։

Դեռևս Աշշուրնիրարի VI-ը (753—746) իր գահակալության առաջին տարում արշավեց դեպի Հյուսիսային Ասորիք, Բիթ-Ադուսի իշխանությունը, որի կենտրոնն էր Արպադ քաղաքը (ներկ. Ռիֆաթ, Հալեպից հյուսիս) և հարկադրեց նրա կառավարիչ Մաթթի'ել թագավորին դաշնակցային պայմանագիր կնքել։ Այդ բանին անմիջապես արձագանքեց ուրարտական թագավոր Սարգուրի II-ը (764—735)։ Մ. թ. ա. 753 կամ 752 թ. նա պարտության է մատնում Ասորեստանի թագավորին, և Հյուսիսային Ասորիքում վերահաստատվում է Ուրարտուի գերիշխանությունը[36]։ Դրանից հետո, մ. թ. ա. 746—744 թթ. Սարգուրին արշավանք է ձեռնարկում Մելիդուի և Կումմախի (Կոմմագենե) դեմ, որոնք հարկատու են դառնում Ուրարտուին[37]։ Սակայն մեկ տարի անց, մ. թ. ա. 743 թ. Թիգլաթպալասար III-ը արշավանքի է ելնում դեպի Հյուսիսային Ասորիք և Արպադի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախում է Սարգուրի II-ին ու նրա դաշնակիցներին՝ Բիթ-Ադուսիի թագավոր Մաթթի'ելին, Մելիդուի թագավոր Սուլումալին, Գուրգումի թագավոր Թարխուլարին և Կումմախուի թագավոր Կուշտաշպիին։ Սարգուրի II-ը փախուստի է դիմում, իսկ նրա նախկին դաշնակիցները հարկադրված են լինում դառնալ Ասորեստանի հարկատուները։ Բայց Սարգուրի II-ը շարունակում է նեցուկ լինել նրանց և Ասորեստանն ստիպված էր քանիցս արշավանքներ ձեռնարկել այդ երկրները հնազանդության մեջ պահելու համար։ Ի վերջո, 735 թ. գործը հասնում է ռազմական ընդհարման անմիջականորեն Ուրարտուի և Ասորեստանի միջև։ Խալպուի ճակատամարտում Սարգուրի II-ը ծանր պարտություն է կրում և նահանջում իր երկիրը։ Ասորեստանյան զորքերը հետապնդում են նրան մինչև Տուշպա մայրաքաղաքը։ Քաղաքն ավերածության է ենթարկվում, իսկ Սարգուրի II-ը փակվում է Վանի ժայռի միջնարերդում։

Դրանից հետո փոքրասիական երկրները կարծես թե հանդարտվում են և Ասորեստանին հարկ են վճարում։ Մի քանի տարի անց, 723 թ. Թիգլաթպալասար III-ը ստիպված է լինում արշավել Թաբալի թագավոր Ռուսսուրմեի դեմ, որը հրաժարվել էր Ասորեստանին հարկ վճարելուց։ Թիգլաթպալասարը գահընկեց է անում նրան և նրա փոխարեն գահ բարձրացնում Խուլլիին (728—717)[38]։ Վերջինիս գահանիստը Բիթ-Բուրուտաշ երկիրն էր, «որ գտնվում է Ակուկա [?] նիզ։ երկրում»[39]։ Բիթ-Բուրուտաշ քաղաքը, ըստ երևույթին, գտնվել է Ծամնգավ գետի կիրճում, ոչ հեռու Սարոս գետի հետ նրա միախառնման վայրից, հավանորեն ներկայիս Ֆարուշ բնակավայրի տեղում։

Ասորեստանի հետագա պայքարն ուղղված էր ընդդեմ հզորացած Փռյուգիայի։ Ասսուրական տեղեկությունները Մուշքու//Մուսքու երկրի մասին (այդ անվան տակ հասկացվում է Փռյուգիան) վերաբերում են Միտա (Միդաս՝ ըստ

36 Г. А. Меликишвили, Наири—Урарту, Тбилиси, 1954, էջ 274։
37 Նույն տեղում, էջ 248։
38 ДВИНУ, № 44 (ст. 17), ВДИ, 1951, № 2, էջ 315։
39 ДВИНУ, № 46 (165), նույն տեղում, էջ 318։

հին հունական պատմական ավանդույթի) թագավորի գահակալության շրջանին, մոտավորապես 720—674 թթ. մ. թ. ա.։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ Փռյուգիական պետությունը հասել էր իր հզորության գագաթնակետին, որը սակայն ավարտվեց փոքրասիական այդ պետության ջախջախումով և կործանումով։

Միտա թագավորը Ասորեստանի դեմ կազմակերպում է Կիլիկյան Տավրոսի և Անտիտավրոսի մանր պետական կազմավորումների համադաշնակցություն։ Այս համադաշնակցության մեջ էին մտնում Թարալի գլխավորած երկրները. «Թարալ» անունը կրող միությունն ընդգրկում էր հետևյալ երկրները. Հյուսիսային Խիլակկու (Ծամնդավ գետի կիրճում, հավանական է, Կեսարիա քաղաքի շրջակայքի ընդգրկմամբ), Հարավային Խիլակկու (Քարային Կիլիկիա), Կուե (Դաշտային Կիլիկիա), Տուննա (հին հունական հեղինակների Տիանան կամ Տոանան) և Խուբիշնա (ուշ ժամանակաշրջանի Կիբիսայի շրջանը)։ Նրանց հարում են անդրեփրատյան երկրները Մելիդու (անտիկ Մելիտենե). Կամմանու (Կատաոնիա, Կապադովկյան Կոմանա կենտրոնով) և Թիլ-Գարիմմու (ներկ. Գյուրունի շրջանը) շրջաններով, Կոմմախուն (անտիկ Կոմագենը) Գուրգում (կամ Բիթ-Պա՝ ալլա Մարկասու կենտրոնով. ներկ. Մարաշ), Սամ՝ալ (ներկ Զենջիրլի) շրջաններով և Կարքեմիշի թագավորությունը։ Հակաասորեստանյան այս համադաշնակցությանը օժանդակում էր ուրարտական Ռուսա I թագավորը (735—714)։

Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը (722—705) հնարավորություն չուներ ակտիվ պայքար մղելու այս համադաշնակցության դեմ, քանի որ հյուսիս-արևելքից նրան սպառնում էր Ուրարտու և Մանա պետությունների միությունը։

Սակայն շուտով դրությունն արմատապես փոխվում է։ Հյուսիսից կիմերական հորդաների ներխուժումը Ուրարտու և Ռուսա I-ի պարտությունը նրանց դեմ մղված պայքարում, ինչպես նաև մեծ ապստամբությունը բուն ուրարտական պետությունում, Սարգոն II-ին հնարավորություն են տալիս 714 թ. ներխուժելու Մանայի և Ուրարտուի սահմանները։ Այս պետությունները ջախջախվում են և Ուրարտուն, փոքրասիական պետությունների այդ հզոր դաշնակիցը, առժամանակ շարքից դուրս է գալիս։ Այժմ Սարգոն II-ը կարող էր իր բոլոր ուժերը տեղափոխել արևմուտք, Փոքր Ասիա։

Մինչ այդ փռյուգիական Միտա թագավորը ամրացել էր Միջագետքից դեպի Փոքր Ասիա և Միջերկրականի ծովեզերքը տանող առավել կարևոր հաղորդակցության ուղիներում։ Դրանցից էին Կարքեմիշ, Կոմմախու (անտիկ դարաշրջանի (Կոմագենը), Մելիդու (ներկ. Մալաթիա) քաղաքները, Կիլիկիայի Ինգիրա (անտիկ Անքիալա, Տարսոնի նավահանգիստը) և Խարրուա (Կալիկադնոսի մոտ գտնվող Սելևկիայից ոչ հեռու) նավահանգիստները։ Էյուկում (Բողազ-քյոյից ոչ հեռու) և Տիանայում գտնված փռյուգիական արձանագրությունները ցույց են տալիս, որ Տարսոնից Սինոպ տանող մայրուղին անցնում էր Փռյուգիական թագավորությանը ենթակա հողերով[40]։

Փոքր Ասիայում Ասորեստանի շահերին սպառնացող վտանգը (որն ստեղծել էր Փռյուգիան) այնքան մեծ էր, որ Սարգոն II-ը հարկադրված էր միաժամանակ իր ուշադրությունը արևելքից արևմուտք տեղափոխել։ Մ. թ. ա.

40 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 315։ Տե՛ս նաև М. И. Максимова, К вопросу о выходе хеттов на южный берег Черного моря, ВДИ, 1951, № 2, էջ 316։

շուրջ 717 թ. վերաբերող ասսուրական արձանագրությունները հիշատակում են Սարգոն II-ի արշավանքը մուշքիացի Միտայի և Կարքեմիշի դեմ[41]։

Այդ արշավանքի ժամանակ Թաբալի թագավոր Խուլլին գահընկեց է արվում և Սարգոն II-ը «նրա թագավորական գահին» է նստեցնում նրա որդուն՝ Ամբարիսին (717—713), ամուսնացնում է վերջինիս իր դստեր՝ Ախատաբիշուի հետ և որպես օժիտ նրան է տալիս Խիլակկու երկիրը։ Այս դեպքերի մասին Սարգոն II-ը պատմում է իր արձանագրության մեջ։

«Թաբալցի Ամբարիսին, որին ես նստեցրի Խուլլիի, իր հոր գահին, ես (կնության) տվեցի իմ դստերը և նրա հետ միասին Խիլակկու շրջանը, որը չէր մտնում նրա հոր տիրույթների մեջ, ընդարձակելով նրա երկիրը, իսկ նա, ապերախտը, սուրհանդակ ուղարկեց ուրարտացի Ուրսայի և Մուսք Միտայի մոտ իր սահմանները խլելու նպատակով, Ամրիսին (!)[42] իր ընտանիքի, ընդոծինների, իր տոհմի անգամների, իր երկրի ավազանու, 100 մարտակառքերի հետ միասին ես տարա Ասորեստան»[43]։

Փաստերը ցույց են տալիս, որ այդ ամուսնության նպատակն էր նախ և առաջ հուսալի հետախուզություն ունենալ այդ անհանգիստ լեռնային երկրների թիկունքում, և, միաժամանակ, ձեռք բերել Թաբալի երկրներից ամենաազդեցիկ թագավորության բարեկամությունը։ Սակայն դա ևս չի օգնում։ Երբ Սարգոն II-ը վերադառնում է, Ամբարիսը, «ապերախտ խեթը, սուրհանդակ է ուղարկում «ուրարտացի Ուրսայի, Մուսք Միտայի... Թաբալի թագավորների մոտ»[44]։

Պայքար մղելով իրենց տերության թե՛ արևելյան, թե՛ արևմտյան մատույցներում, Ասորեստանի թագավորները ի վիճակի չէին ոչնչացնելու տեղական թագավորական տները։ Նրանք աշխատում էին արհեստականորեն երկպառակություններ սերմանել երկրի գահը տարբեր անձանց փոխանցելով, որպեսզի այդ միջոցով իրենց իշխանության տակ պահեին անհնազանդ ցեղերին. Սակայն այն բանից հետո, երբ Սարգոն II-ը մ. թ. ա. 714 թ. արևելքում ջախջախում է Ուրարտուին և Մանային, նա արդեն հաշվի չէր նստում անգրեփրատյան երկրների իշխողների հետ։ 713 թ. նա արշավում է դեպի Փոքր Ասիայի երկրները։ Ամենից առաջ ներխուժում է Կարքեմիշի թագավորություն ու Կոմմախու և ոչնչացնում նրանց թագավորներին։ Կոմմախուում թագավոր է նշանակվում Մուտալլուն, որից հետո Ասորեստանի թագավորը բարձրանում է լեռները և թափանցում Կամմանու շրջանը, որի թագավոր Գունդինանուի նստավայրը Մելիդուում էր։ Սա գահընկեց է արվում[45], իսկ նրա փոխարեն գահ է բարձրացվում Թարխունազին։ Դրանից հետո ասորեստանցիները ներխուժում են Գուրգում շրջանը։ Նույն ձևով թագավորական իշխանությունից զրկվում է Թարխուլարան, որի նստավայրը Մարկասու (ներկ. Մարաշ) քաղաքում էր[46]։ Կոմմախուի կառավարիչ է նշանակվում արքայազն Մուտալլուն։ Բոլոր այս երկրները մտցվում են Ասորեստանյան տերության կազմի մեջ։ Իր

41 АВИИУ, № 46 (46), ВДИ, 1951, № 2, էջ 316։
42 Գրչական սխալ է, պետք է լինի Ամբարիսին։
43 АВИИУ, № 54, ВДИ, 1951, № 3, էջ 209։
44 АВИИУ, № 46 (165), ВДИ, 1951, № 2, էջ 318։
45 АВИИУ, № 46 (178), № 77 (7), ВДИ, 1951, № 2, էջ 318—320։
46 АВИИУ, № 47 (10), նույն տեղում, էջ 320։

արձանագրության մեջ Սարգոն II-ը հաղորդում է. «Բոլոր այդ երկրներում ես փոխարքաներ նշանակեցի»[47]։

Այս երկրներում իր իշխանությունը վերականգնելով, Ասորեստանի թագավորը հասնում է ընդհուպ մինչև Թաբալի սահմանները, սակայն Կիլիկյան Տավրոսի դժվարանցանելի լեռները կտրելը վտանգավոր էր։ Սարգոն II-ը գերադասում է Թաբալին մոտենալ հարավից։ Նա վերստին նվաճում է Դաշտային Կիլիկիան՝ Կուե, և այնտեղից բարձրանում լեռները, անցնելով հավանաբար Կիլիկյան դռներով։

Ասորեստանի թագավորի ղայրությունը զոհ են գնում առաջին հերթին Թաբալի թագավորներ Կիակկին (Շինուխտու քաղաքի տիրակալը) և Ամբարիսը (Բիթ-Բուրուտաշ քաղաքի տիրակալը)։ Կիակկին իր ամբողջ տոհմով ու բոլոր գանձերով գերվում է, իսկ նրա տիրությունները հանձնվում են Տուննայի (անտիկ դարաշրջանի Տիանան) տիրակալ Մատիին[48]։

Շինուխտու քաղաքի շրջանից Սարգոն II-ը թափանցում է Թաբալի դժվարամատչելի կիրճերը, Բիթ-Բուրուտաշ քաղաքը։ Ամբարիս թագավորը իր ողջ տոհմով ու ավագանիով գերի է վերցվում և ուղարկվում Ասորեստան։ Թաբալի թագավորությունը ջախջախվում և ընդմիշտ ոչնչացվում է։ Սարգոն II-ը պարծենալով հայտարարում է. «Թաբալ երկիրը ես ոչնչացրի մինչև նրա ծայրագույն սահմանները մոռացության մատնելով նրան... այնտեղ ես բնակեցրի Աշշուրի, իմ տիրակալի կողմից նվաճված երկրների մարդկանց, իմ հավատարիմ մարդուն ես նրանց վրա կուսակալ նշանակեցի և ասսուրական պարհակներ սահմանեցի»[49]։

Արձանագրություններից մեկում Սարգոն II-ի մասին ասվում է, որ նա նվաճել է «Ուրարտուն, Կասկուն, Թաբալը՝ ընդհուպ մինչև Մուսքու... հետապնդել է Միտային, Մուսկուի թագավորին, վերադարձրել Կուեին [Միտա թագավորի] խլած ամրոցները»[50]։ Մի այլ արձանագրության մեջ Սարգոն II-ը հաղորդում է. «...ես արտաբնակեցրի Կասկու, Թաբալու, Խիլակկու երկրների բնակիչներին, ես արտաքսեցի Միտային, Մուսքերի երկրի թագավորին...»[51]։

Այսպիսով, փոյուգիական Միտա թագավորը ստիպված է լինում կրկին թողնել Փոյուգիայի համար խիստ կենսական այդ տերիտորիաները։ Միջերկրական ծովեզերքի բանալին՝ Կիլիկյան դռները, նորից անցնում է Ասորեստանին։

Ասորեստանյան տիրապետության ամրապնդումն այդ երկրներում առանձնապես անհանգստացնում էր փոյուգիացի Միտային և ուրարտացի Արգիշտի II-ին (Ռուսա I-ի որդին)։ Նրանք նախկինի պես ձգտում էին ակտիվացնել իրենց ազդեցությունը և իրենց կողմը գրավել այդ երկրների ասսուրական կառավարիչներին։ Ասորեստանի թագավորն ստիպված էր անընդհատ պատժիչ ջոկատներ ուղարկել այդ երկրները հնազանդության մեջ պահելու համար. Նախկինի նման սրանց տիրակալները հովանավորություն և դաշինք էին ակնկալում Ուրարտուի և Փոյուգիայի թագավորներից։

---

47 АВИИУ, № 47 (7), նույն տեղում։

48 АВИИУ, № 54 (28), ВДИ, 1951, № 3, էջ 209։

49 АВИИУ, № 46 (165), ВДИ, 1951, № 2, էջ 318։ Տե՛ս նաև № 54, ВДИ, 1951, № 3, էջ 209։

50 АВИИУ, № 53, ВДИ, 1951, № 3, էջ 208։

51 АВИИУ, № 47 (10), ВДИ, 1951, № 2, էջ 320։

Մեկ տարի անց, մ. թ. ա. 712 թ. Սարգոն II-ը հարկադրված էր նոր պատժիչ արշավանք ձեռնարկել դեպի անդրեփրատյան երկրները, որոնք անջատվել էին Ասորեստանից և միացել Ուրարտուին ու Փռյուգիային։ Այդպես է վարվում, օրինակ, Կումմախուի տիրակալ Մուտալլու թագավորը, որը, ապավինելով Ուրարտուի թագավոր Արգիշտիին, «դադարեցնում է իր երկրից հարկի և տուրքի առաքումը»[52]։

Սարգոն II-ը արշավանք է ձեռնարկում Մուտալլուի դեմ, բայց հենց որ ասորեստանյան զորքերը մոտենում են Կումմախուին, վերջինս փախչում է։ Երկրի կենտրոնը և մյուս 62 ամրացված «քաղաքները» պաշարվում և գրավվում են։ Երկիրը ավերվում ու թալանվում է։ Կումմախուի բոլոր բնակիչները գերի են տարվում։ «Այդ շրջանը,— ասում է Սարգոնը,— ես նորից բնակեցրի»[53]։

Կումմախուի կառավարիչ Մուտալլուն, ըստ երևույթին, փախչում է Գուրդում։ Սարգոն II-ի արձանագրության համաձայն «Գուրդումցի Թարխուլարուին զենքով խոցեց նրա որդի Մուտալլուն. առանց իմ գիտության բազմելով դահին նա կառավարում էր իր երկիրը»[54]։ Սակայն Սարգոն II-ը հասնում է նրան և գրավում նրա մայրաքաղաքը՝ Մարկասուն։ Մուտալլուն, նրա տոհմն ու բոլոր գանձերը գերի են տարվում։ «Գուրգում երկրի ողջ բնակչությանը, մինչև նրա ծայրագույն սահմանները» Ասորեստանի թագավորը «բնակեցնում է նոր վայրում (?), նրանց վրա կուսակալ է նշանակում իր հավատարիմ մարդուն, մարդապետին և դասում նրան Ասորեստանի մարդկանց շարքը»[55]։

Կումմախուի օրինակով Ասորեստանից անջատվել էր Մելիդուի կառավարիչ Թարխունազին։ Վերջինս, որ «չէր վախենում աստվածների անունից», անջատվեց Ասորեստանից և դադարեց հարկ վճարել։ Կումմախուն հնազանդեցնելուց հետո Սարգոն II-ը ելնում է Մելիդուի դեմ և նվաճում այն։ «Եվ զայրացած սրտով ես նվաճեցի Կամմանու երկիրը մինչև նրա ծայրագույն սահմանները [...]. Մելիդուն, նրա թագավորանիստ քաղաքը, ես ջախջախեցի ինչպես կավանոթ, նրա բոլոր մարդկանց ես ոչխարների հոտին հավասարեցրի»[56] (այսինքն՝ գերեվարեցի— Ս. Ն.)։ Թարխունազին «իր կյանքը փրկելու համար փախավ Թիլ-Գարիմմու քաղաքը»[57]։ Սակայն Սարգոն II-ը գրավում է այդ քաղաքը և Թարխունազիին գերի է տանում Աշշուր, նրա ողջ տոհմի և զգալի թվով զորքի հետ։ Երկիրն ամայացվում է և նորից բնակեցվում։

«Թիլ-Գարիմմու քաղաքը,—ասում է Սարգոն II-ը,—ես նորից բնակեցրի և այնտեղ տարա իմ ձեռքով նվաճած երկրների մարդկանց։ Կամմանու երկիրը ես նվաճեցի մինչև նրա սահմանները և տվեցի իմ հավատարիմ մարդու ձեռքը»[58]։

Թարխունազին, իր արքունիքով և գանձերով, փախչում է լեռները և թաքնվում Թիլ-Գարիմմու ամրացված քաղաքում։ Սակայն Սարգոն II-ը գրավում է նաև այս քաղաքը և գերում բոլորին. «Թիլ-Գարիմմուն ես նորից բնակեցրի... Այս շրջանը ես հանձնեցի իմ հավատարիմ մարդու ձեռքը և սահմանեցի նույն

52 АВИИУ, № 54 (112), ВДИ, 1951, № 3, էջ 210։
53 Նույն տեղում, էջ 211։
54 АВИИУ, № 54 (72), նույն տեղում, էջ 210։
55 Նույն տեղում։
56 АВИИУ, № 2, 46 (178), ВДИ, 1951, № 2, էջ 318։
57 Նույն տեղում։
58 Նույն տեղում։

շինարարական ու ռազմական պարհակները, որոնք կային նախկին թագավոր Գունզինանուի օրոք»[59]։

Թիլ-Գարիմմուն Ասորեստանի կազմի մեջ մտցված ծայրագույն հյուսիսային շրջանն էր, նրանից այն կողմ սկսվում էր Հալիս գետի վերին հոսանքի շրջանը, ուր գտնվում էին Ուրարտուի և Փռյուգիայի սահմանները։

Հրով ու սրով նվաճելով այս երկրները, Սարգոն II-ը սկսում է ամրացնել իր տերության սահմանները Ուրարտուի և Փռյուգիայի կողմից։

Իր տարեգրություններում Սարգոն II-ը հաղորդում է. «Լուխուս, Բուրդիր, Անմուռու (?)[60], Կի[ակկա][61], Անդուարսալիա քաղաքները ես դարձրեցի սահմանապահական ամրոցներ ընդդեմ Ուրարտուի։ Ուսի, Ուսիան (?), Ուարգին քաղաքները ես հիմնեցի Մուսքերի երկրի հետ ունեցած սահմանի վրա. ես անդառնալիորեն գրավեցի նրանց դոները»[62]։

Դժվար է որոշել Ուրարտուի սահմանի վրա գտնվող պահպանական ամրությունների (հատկապես Լուխսու և Բուրդիր «քաղաքների») տեղադրությունը, սակայն փնտրել դրանք պետք է Ասորեստանին ենթարկված Թիլ-Գարիմմու և Մելիդու տերիտորիաների հյուսիսային սահմաններում. դրանք պետք է Ուրարտուից բաժանված լինեին ջրաբաժան այն լեռնաշղթայով, որը արևելքում ճյուղավորվում է Անտիտավրոսից և շարունակվում մինչև Եփրատ, հասնելով ներկայիս Ակնի և Արաբկիրի շրջանները։

Ավելի լավ են տեղորոշվում փռյուգիական սահմանի սահմանային քաղաք-ամրությունները։ Փոքր Ասիայի այս մասում սահմանային գիծն սկսվում էր Կիլիկյան դոներից, որոնք, համաձայն արձանագրության, Ասորեստանի թագավորը «անդառնալիորեն գրավել էր», և շարունակվում էր դեպի հյուսիս. Տարսոնից Սինոպ գնացող մայրուղու երկայնքով։ Ուսիանը տեղորոշվում է հռոմեական դարաշրջանի Osiana-ի տեղում (Նիսայից արևմուտք), Հալիս գետի ափին։ Ուսին նույնացվում է հռոմեական դարաշրջանի Chusa-ի հետ և տեղորոշվում է ինչ-որ տեղ Ակսերայի շրջանում։

Երրորդ կետը, Ուարգինը, պետք է փնտրել Տուննայի (այսինքն՝ անտիկ դարաշրջանի Տիանայի) շրջանում։ Ուրարտուի և Փռյուգիայի կողմից սահմաններն ամրացնելու ուղղությամբ Սարգոն II-ի ձեռնարկումները պետք է եղած լինեն մ. թ. ա. 712—710 թթ.։

Այսպիսով, հաստատվելով Հյուսիսային Ասորիքում Թիգլաթպալասար III-ի օրոք, ասորեստանցիները Սարգոն II-ի օրոք ջախջախում և ոչնչացնում են փոքրասիական Թարալու, Կումմախու (Գուրգումի և հավանորեն Սամ'ալի հետ միասին) և Մելիդու (Կամմանու և Թիլ-Գարիմմու շրջանների հետ միասին) թագավորությունները։ Տեղական բնակչությունը տեղահանվում է և վերաբնակեցվում ըստ երևույթին Հյուսիսային Միջագետքում, իսկ նրանց երկիրը բնակեցվում է ասորեստանցիներով։

---

59 АВИИУ, № 54 (72), ВДИ, 1951, № 3, էջ 210։

60 Համապատասխանում է բյուզանդական դարաշրջանի Ἀμασεια-ին (այժմ Էմիրբյոյը Արգուվանից ոչ հեռու)։ Տե՛ս Ernst Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen quellen, Bruxelles, 1935.

61 Անտիկ Ciacca-ն հիշատակվում է հռոմեական մղոնաչափերում, այժմ Ջերմուկ, Մայաթիայից հյուսիս։

62 АВИИУ, № 46 (178), ВДИ, 1951, № 2, էջ 319։

Արևմուտքում տարած այս հաղթանակները Սարգոն II-ին հնարավորություն տվեցին նորից ուշադրությունը կենտրոնացնել արևելքում, որտեղ ստեղծվել էր Ասորեստանի համար վտանգավոր հետևանքներով հղի իրադրություն։

Սարգոն II-ի օրոք հզորացած Ասորեստանը, որը մ. թ. ա. 714 թ. ջախջախեց Ուրարտուին, Հյուսիսային Ասորիքում ու Փոքր Ասիայի հարավ-արևելյան մասում իր տիրապետությունը ամրապնդելուց հետո մտադիր էր գրավել նաև Մանան, բայց Ուրմիա լճի շրջանում կիմերների և սկյութների երևան գալը ձախողեց նրա զավթողական ծրագրերը։ Մինչ Ասորեստանը պատերազմներ էր մղում իր արևմտյան սահմաններում, Ուրարտուն վերականգնում է իր ուժերը, իսկ կիմերները, նրա նախկին թշնամիները, դառնում են ուրարտական նոր թագավոր Արգիշտի II-ի բարեկամն ու դաշնակիցը։ Այդ նույն ժամանակ Մանայում ասպարեզ են գալիս սկյութները, որոնք շուտով դառնում են մանացիների դաշնակիցները։ Եվ այսպես, Ասորեստանյան տերության այս սահմանի մոտ ստեղծվում է բարդ իրադրություն։ Սարգոն II-ը մտադիր էր կայծակնային հարվածով խոցել ուրարտացիներին և նրանց դաշնակից կիմերներին, բայց այդ երթն ավարտվում է Խուբուշնայի ճակատամարտով և, հնարավոր է, հենց իր՝ Սարգոն II-ի մահով մ. թ. ա. 705 թ.[63]։ Խուբուշնա դաշտավայրը, որտեղ հաստատվել էին կիմերները, գտնվում էր Ուրարտուի, Մանայի և Ասորեստանի[64] սահմանների հանդիպման վայրում և հենց այս շրջանն է նկատի առնվել Ռուսա II-ին (685—645) հասցեագրված Սագաշտարայի տնտեսական փաստաթղթի տեքստում։ Այստեղ, այս դաշտավայրում, և ոչ թե Կիլիկիայում, մ. թ. ա. 705 թ. ասորեստանցիների ու կիմերների միջև տեղի է ունեցել մեծ ճակատամարտ, որն ավարտվել է Սարգոն II-ի սպանությամբ։ Սա մեծ հարված էր Ասորեստանի հեղինակությանը։ Առավել վտանգավոր թշնամու այս պարտությունը հաղթանակ էր Ուրարտուի և Մանայի համար, որոնք կարճ ժամանակով ամրապնդվում են և նույնիսկ սպառնում ոչ այնքան վաղուցվա ագրեսորին։

679—678 թթ. կիմերների առաջնորդ-թագավոր Տեուշպան[65]. հավանորեն ոչ առանց ուրարտական թագավորի դիտության և որպես նրա դաշնակից, Մա-

---

63 Տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, էջ 236։

64 Խոսելով ասորեստանցիների և կիմերների նոր ռազմական ընդհարման մասին, որ տեղի է ունեցել մ. թ. ա. 678 թ. Ասարխադդոն թագավորն իր արձանագրության մեջ հաղորդում է. «...Ումման-մանդուի կիմերացի Տեուշպային, որի տեղը հեռու է, ես խոցեցի զենքով, նրա ողջ զորքի հետ միասին, Խուբուշնա երկրի հողում» (АВИИУ, № 65, ВДИ, 1951, № 3, էջ 215 և էջ 216, ծանոթ. 3)։ Սովորաբար Խուբուշնան նույնացվում է Խուրիշնայի հետ (ուշ շրջանի Կիբիսան Կապադովկիայում), որ սխալ է. Խուրուշնան պետք է որ ծագի ուրարտական Usniaihubi-ից, որ նշանակում է «Ուշնայի (resp. Usini) դաշտավայր (հովիտ)» և պետք է տեղադրվի Ներկ. Ուշնուե քաղաքի շրջանում, Ուրմիա լճից հարավ-արևմուտք։ Այս նույն շրջանի մասին է խոսվում նույն ժամանակաշրջանի ասսուրական նամակ-զեկույցում. «Ներկայումս բոլոր կիմերները հենց նոր դուրս են եկել,— կարդում ենք այդ նամակում,— և կանգ առել Մենդա բնակավայրում» (կամ Մեինդա, АВИИУ, № 41 (41, 2), ВДИ, 1951, № 2, էջ 355)։ Մենդա կամ Մեինդա քաղաքը հավանաբար համապատասխանում է Նիրկայիս Միանդաբուին, որ գտնվում է Ուրմիա լճից հարավ, Ուշնուեից հարավ-արևելք։ Այդ մասին անուղղակիորեն վկայում են հենց ասսուրական աղբյուրները։ Շտրեկը (տե՛ս Zeitschrift fur Assyriologie und verwandte Gebiete, XV, էջ 366) ուշադրություն է դարձրել այն բանի վրա, որ Սարգոն II-ը զոհվել է «կուլումեացիների»՝ մարական Կիլման կամ Կուլման ամրոցի բնակիչների պատճառով. այդ ամրոցը գտնվում է Խարխարի ակունքներից արևելք։

65 Ամենայն հավանականությամբ սա Սագաշտարայի առաջնորդի հաջորդն էր։

նայի տերիտորիայի վրայով ներխուժում է Ասորեստան։ Մ. թ. ա. 678 թ. Ասարխադդոն թագավորը (680—669), հավանաբար նույն Խուբուշնա դաշտավայրում, ջախջախում է Տեուշպային։ Վերջինս այս մարտում սպանվում է[66]։

Մանայի սահմանի մոտ Ասորեստանի տարած հաղթանակը և Ուրարտուի ու կիմերների դաշինքը բարեկամության է մղում Մանային և սկյութներին. Մանայի թագավոր Ախշերին 680—673 թթ. Ասորեստանի հետ վարած պատերազմներում իր տրամադրության տակ ուներ սկյութների վարձկան զորք («Ուշկուդայի հորդաներ») նրանց թագավոր Ուշակայի գլխավորությամբ։

Այս ժամանակաշրջանից սկսած Մանան ուժեղանում է և ընդարձակում իր տերիտորիան ի հաշիվ շրջակա պետությունների։ Մանացիները իրենց այնքան ուժեղ էին զգում, որ գրավում են մ. թ. ա. 714 թ. Ասորեստանին ենթարկված Մուսասիրի տերիտորիան, որտեղից, դաշնակից սկյութների հետ միասին, սպառնում էին Ասորեստանի կենսական կենտրոններին[67]։

Այսպիսով, 674 թ. Մանան դուրս է գալիս Ասորեստանի հովանավորության տակից և նույնիսկ սպառնալիք դառնում Մարաստանում Ասորեստանի տիրապետության համար[68]։ Դրան ավելանում է սկյութների ներխուժումը կենտրոնական Մարաստան, որը տեղի է ունեցել, ամենայն հավանականությամբ, 674 թ. վերջից ոչ ուշ։ Սկյութները դառնում են մարերի բնական դաշնակիցները Ասորեստանի դեմ մղված պայքարում[69]։ Ստեղծվում է մի իրադրություն, որի պայմաններում Ասորեստանը հարձակումից պետք է անցներ պաշտպանության՝ պաշտպաներ իր հյուսիս-արևելյան սահմանները բարբարոսների՝ «ուման մանդայի», այսինքն կիմերների ու սկյութների արշավանքների սպառնալիքից։

Ասարխադդոնին առանձնապես վախեցնում էր սկյութների և Մանայի դաշինքը։ Մեզ է հասել Ասարխադդոնի հարցումներից մեկը Շամաշ աստծու պատգամախոսին՝ քաղաքական հարցերի կապակցությամբ։ Այնտեղ ասորեստանյան թագավորը տագնապով հարցնում է. «Սկյութների զորքը, որոնք բնակվում են մանացիների երկրի շրջանում, [և] որոնք եկել էն Մանացիների երկրի սահմանը, մտադի՞ր են արդյոք, որոշե՞լ են արդյոք, դուրս կգա՞ն արդյոք նրանք Խուրուշկիա քաղաքի լեռնանցքից Խառանիայի[70] և Անիսուի[71] բնակավայրերի վրա։ Կթալանե՞ն արդյոք, կգերե՞ն արդյոք մեծաթիվ ավար, ծանր գերություն Ասորեստանի սահմաններից։ Քո աստվածային մեծությունը տեղյակ է»[72]։

---

66 Տե՛ս Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 292, И. М. Дьяконов, История Мидии, էջ 236։

67 Մանայի տիրապետությունը Մուսասիրում հանգեցրեց այդ երկու երկրների էթնիկական մերձեցման։ Վաղ անտիկ հեղինակները Մուսասիրի տերիտորիան համարում են Մատիենի՝ անտիկ դարաշրջանի Մանայի, մի մասը։ Խուրուշկիայի տերիտորիան՝ Պակտիկան, հայացվել էր և Հերոդոտը (III, 93) անվանում է այն «արմենների երկիր», մինչդեռ Մուսասիրի տերիտորիան դեռ երկար ժամանակ պահպանում է իր էթնիկական դեմքը։ Այսպես, օրինակ, վաղ միջնադարյան հայ հեղինակները այն անվանում են «Մարաց ամուր աշխարհ»։

68 И. М. Дьяконов, История Мидии, էջ 264—265։

69 Նույն տեղում, էջ 266։

70 Խառունա կամ Խառանա ամրոցը գտնվում էր «ներքին Զամուայի» արևմտյան մասում, տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, էջ 265, ծանոթ. 1։

71 Անիսու՝ բնակավայր Խարիու շրջանում, Ուրարտուի հարավ-արևելյան սահմանում։ Տե՛ս И. М. Дьяконов, նույն տեղում։

72 АВИИУ. № 68 (6). ВДИ, 1951, № 3. էջ 224։

Սարգոն II-ի զոհվելուց հետո ստեղծված իրադրության պայմաններում արևելքում՝ Ասորեստանի սահմանի մոտ, Կիլիկյան Տավրոսի և Անտիտավրոսի լեռներում նորից ակտիվացավ փռյուգիական թագավորը։ Այս պայմաններում Ասորեստանին այդպես էլ չի հաջողվում վերջնականապես հնազանդեցնել հարավ-արևելյան Փոքր Ասիայի լեռնային շրջանները, հատկապես Կիլիկիայի մերձափնյա շրջանները։

Սարգոն II-ի հաջորդը, նրա որդի Սինախերիբը (705—681) ստիպված է լինում արշավել այդ շրջանները։ Մ. թ. ա. 681 թ. վերաբերող արձանագրությունը պատմում է այն արշավանքի մասին, որ ձեռնարկել էր այդ թագավորը Խիլակկու երկրի ծովեզերյա մասի ապստամբած կառավարչի դեմ։ «Կիրուան. Իլլուբրու (հետագայում Լամբրոն) բնակավայրի առաջնորդը... ըմբոստացրեց Խիլակկու քաղաքի բնակչությունը և գնդերը հավաքեց պատերազմի համար»։ Ապստամբած Կիրուայի կողմն են անցնում Տարզու (ներկ. Տարսոն) քաղաքի և նրա նավահանգիստ Ինգիրայի (անտիկ շրջանի Անքիալա) բնակիչները և արշավանք են ձեռնարկում դեպի ասսուրական Կուե նահանգը[73]։

Սինախերիբը զորքեր է ուղարկում նրանց դեմ, որոնք «պարտության մատնեցին Խիլակկուի բնակիչներին զառիթափ լեռներում, նվաճեցին Ինգիրան և Տարզուն և գերեվարեցին նրանց»։ Կիրուան փակվում է Իլլուբրուում, բայց ասորեստանյան զորքերը պաշարում ու գրավում են քաղաքը։ Կիրուան, ողջ ժողովրդի հետ միասին, գերի է տարվում Նինվե։ Նվաճված երկրամասը վերստին բնակեցվում է[74]։

Կասկածից վեր է, որ Խիլակկու կառավարիչը չէր հանդգնի ապստամբել, եթե նրա թիկունքին կանգնած չլիներ Միտա փռյուգիացին։ Վերջինս շարունակում էր իր պայքարը Ասորեստանի դեմ, պաշտպանելով Փռյուգիական պետության շահերը Փոքր Ասիայի հարավ-արևելյան մասում, իր ձեռքում պահելու համար այդ պետության մատույցները։ Անտիտավրոսի լեռներում փռյուգիական թագավորը պայքար էր մղում ընդդեմ Ասորեստանի տիրապետության։ Այսպես, օրինակ, Թիլ-Գարիմմու շրջանում վերացվում է Ասորեստանի թագավորի իշխանությունը և կառավարիչ է նշանակվում Գուրդին (Գորդիոս), հավանորեն փռյուգիական կառավարող դինաստիայի ներկայացուցիչներից մեկը։ Մ. թ. ա. 685 թ. է վերաբերում Սինախերիբի արձանագրություններից մեկի այն տեղեկությունը, որից իմանում ենք, թե նա զորքեր է ուղարկել «ընդդեմ Թիլ-Գարիմմուի, Թա[բալի] սահմանների մոտ գտնվող քաղաքի, որի թագավորական իշխանությունը [...] ամրապնդեց (?) Գուրդին (?)»։ Ասորեստանցիները դրավում և գետնին են հավասարեցնում քաղաքը, իսկ նրա բնակչությունը տրվում է զորքին՝ «որպես մանր անասուններ», այսինքն ստրկացվում է[75]։

Չնայած հաղթանակներին, ասորեստանցիներն այս երկրներում իրենց կայուն չէին զգում։ Քաղաքական գործերով Շամաշ աստծու պատգամախոսին արած իր հարցումներում Ասարխադդոնը (681—660) հայտնում է, որ նրան անհանգստություն են պատճառում «Մուշքու/ /երկրի բնակավայրի առաջնորդ Միտան», «նրա սուրհանդակները [...]», «նրա եղբոր որդին և զորքը...]»[76]։

73 АВИИУ, № 59 (IV, 61), նույն տեղում, էջ 213։
74 АВИИУ, № 59 (IV, 60), նույն տեղում։
75 АВИИУ, № 59 (V, 1), նույն տեղում։
76 АВИИУ, № 68 (Д), նույն տեղում, էջ 229։

Պետք է ենթադրել, որ փռյուգիական թագավորը ակտիվացրել էր իր գործողությունները ոչ միայն ասորեստանյան սահմանի մոտ, որի արդյունքը եղավ Թիլ-Գարիմմու շրջանի անջատումն Ասորեստանից և իր դրածոյի նշանակումն այնտեղ, այլ գրավել էր նաև կից տերիտորիաները, որոնք մտնում էին Ուրարտական պետության կազմի մեջ։ Ուրարտուն, անտարակույս, դիմել էր պատասխան գործողությունների։

Ասորեստանի և Ուրարտուի արևելյան սահմանների մոտ ստեղծված քաղաքական իրադրությունը, այն է՝ Մանայի հզորացումը և նախկինում Ուրարտուի ու Ասորեստանի կազմի մեջ մտնող մի շարք տերիտորիաների դրավումը նրա կողմից, մանացիների ու սկյութների դաշինքը և ապստամբությունը Մարաստանում՝ մերձեցում են առաջ բերում ուրարտացիների և ասորեստանցիների միջև։ Այս մերձեցումը պայմանավորված էր նաև նրանով, որ այդ երկու տերությունները այժմ արդեն ընդհանուր սահմաններ չունեին։ Արմե-Շուպրիան, հավանորեն, շուտով գավթում է Խուրուշկիան և երկու տերությունների միջև ստեղծվում է «բարբարոսական ծայրամասի» մանր երկրներից կազմված մի պատնեշ։ Այսպիսով, հարավային ուղիները Ուրարտուի առաջ փաստորեն փակվում են և հյուսիս-ասորական ու փոքրասիական քաղաքների հետ տնտեսական կապեր պահպանելու համար նա պետք է ներթափանցեր արևմուտք։ Հասկանալի է, որ Ասորեստանը, որը վերջին ժամանակները շատ էր նեղվել Փոքր Ասիայի հարավ-արևելքում Փռյուգիայի վարած հարձակողական քաղաքականությունից, չէր խանգարում ուրարտացիների և նրանց դաշնակից կիմերների արշավանքին դեպի արևմուտք, ընդդեմ Փռյուգիական թագավորության։ Այդ ժամանակամիջոցում (679—672 թթ.), ընդհանուր վտանգի առաջ, ասորեստանցիները ձգտում են շեզոք և նույնիսկ բարեկամական հարաբերություններ պահպանել կիմերների հետ[77]։

Ուրարտուի և կիմերների միջև դաշնակցային հարաբերությունները հատկապես ամրապնդվում են Ռուսա II-ի (685—655) գահակալության շրջանում։ Նրա օրոք կիմերական զինված ուժերը լայնորեն օգտագործվում են Փռյուգիային, իսկ ապա նաև Ասորեստանին և նրա դաշնակիցը դարձած սկյութներին հարվածելու համար։ Մի կարճ ժամանակամիջոց Ուրարտուն վերստին մեծ տերություն է դառնում։

Կիմերների առաջնորդ Տեուշպայի զոհվելուց հետո (678 թ.) հանդես է գալիս կիմերական մի այլ առաջնորդ «Ուման-Մանդայի թագավոր» Tuktamme-ն[78]։ Արևելքում, Ուրմիա լճի շրջանում պարտության մատնվելուց հետո կիմերներն իրենց հայացքն ուղում են դեպի արևմուտք։ Դա, ըստ երևույթին, համապատասխանում էր Ուրարտուի ղեկավար շրջանների քաղաքական շահերին։ Ուրարտացիները խիստ անհանգստացած էին իրենց վաղեմի թշնամու՝ Ասորեստանի թագավորի նոր հաղթանակով և հատկապես Փոքր Ասիայում Փռյուգիայի կողմից ուրարտական տերիտորիաների գավթումով։ Ռուսա II-ը հավանորեն որոշում է օգտագործել ստեղծված իրադրությունը, կիմերների օգնու-

77 И. М. Дьяконов, История Мидии, էջ 259։

78 Tuktamme-ն կամ Tugdamme-ն համապատասխանում է հին հունական պատմական ավանդույթի Լիգդամիսին, Λυγδαμις (թերևս վաղ շրջանի վրիպում է Δυγδαμις-ի փոխարեն. տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, էջ 240)։ Եթե նկատի ունենանք, որ Տուգդամմեն սահմանվում է 653 թ. մարերի և սկյութների դեմ տված ճակատամարտում, ապա նրա գահակալության տարիները կլինեն 678—653 թթ.։

թյամբ վնասազերծել Ասորեստանի հիմնական հաղորդակցության ուղիները Փոքր Ասիայում և Փռյուգիայից ետ խլել նրա գրաված ուրարտական տերիտորիաները։ Կիմերներին, իհարկե, ամենից շատ հրապուրում էր Փռյուգիական և լյուդիական հարուստ թագավորությունների ավարը։

Մ. թ. ա. 676 թ. Ռուսա II-ը և նրա դաշնակից Տուգդամմեն ուրարտական և կիմերական զորքերի գլուխ անցած արշավում են դեպի արևմուտք՝ Փոքր Ասիա։ Դաշնակիցները թափանցում են Արևմտյան Եփրատի հովիտը, խալիտու երկիրը, որտեղ ջախջախում են խալդայներին, այնուհետև մտնում են նախկին Հայասա երկիրը, որն այդ արշավանքների ժամանակաշրջանում հայտնի էր Խատե անվամբ (հին եբրայական աղբյուրների Թոգարմա կամ Թորգոմա, հետագայի Փոքր Հայքի տերիտորիան)։ Դաշնակիցները ջախջախում են Փոքր Ասիայի առավել հզոր պետությունները՝ Փռյուգիական թագավորությունը (Ռուսա II-ի ուրարտերեն արձանագրության մեջ՝ Մուշքինի)[79], իսկ «մուշքերի թագավոր Միտան», այսինքն փռյուգիական Միդաս թագավորը, Գորդիոսի որդին, ինքնասպանություն է գործում մ. թ. ա. մոտավորապես 674 թ.[80] (և ոչ թե 696 թ., ինչպես ընդունված է ըստ Եվսեբիոսի ավանդական թվագրության)[81]։

Այսպիսով այս վիթխարի ռազմական ձեռնարկումն իրագործելով կիմերները թափանցում են Փոքր Ասիա։ Սկզբնական շրջանում, որպես Ուրարտուի դաշնակիցներ, նրանք այնպիսի հսկայական փոփոխություններ են առաջ բերում փոքրասիական երկրների ճակատագրում, որ հին հունական ավանդությունը, Ուրարտուին մոռացած, Փռյուգիական թագավորության ջախջախումը կապում է նրանց անվան հետ։

Այս արշավանքի ժամանակ Ուրարտու են քշվում հսկայական թվով գերիներ, որոնց բնակեցնում են երկրի կենտրոնական շրջաններում, մասնավորապես՝ Վանա լճի արևմտյան եզերքին։ Այդ մասին տեղեկություն է տալիս Արծկեի արձանագրությունը[82]։ Պետք է ենթադրել, որ բերված բնակչության նշանակալի մասը կազմում էին հայերը։

Այս արշավանքների հետևանքով Ռուսա II-ը իր թագավորությանն է միացնում փոքրասիական բոլոր այն հողերը, որոնք բնակեցված էին հայկական ցեղերով[83]։ Անշուշտ, այս հանգամանքը ևս նպաստում է հայկական տարրի ուժեղացմանը Ուրարտու պետության մեջ, որտեղ այն շուտով գերիշխող է դառնում։

Ուրարտուի և կիմերների այս հզորացումն էր, որ դաշինքի մղեց սկյութներին և Ասորեստանին, դաշինք, որին այնքան համառորեն ձգտում էր վերչինս. եթե Ասորեստանին անհանգստացնում էր հատկապես Ուրարտուի հզորացումը, ապա սկյութներին անհանգստացնում էր իրենց հակառակորդների՝

---

79 УКН, № 278։

80 Strabo, I, 3, 21. Տե՛ս Reallexikon den klasischen Wissenschaft, herausg. von Pauly-Wissowa-Kroll. s. v. Kimmerier, S. 413 (Լեհման-Հաուպտի հոդվածը)։ Г. А. Меликишвили, Некоторые вопросы социально-экономической истории Наири—Урарту, ВДИ, 1951, № 4, էջ 39։ И. М. Дьяконов, История Мидии, էջ 236։

81 Տե՛ս Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 293։

82 УКН, № 278, էջ 341։

83 Հավանարար, դա Փոքր Ասիայի այն մասն էր, ով տարածվում էր մինչև Հալիս գետն ու Սև ծովը. ավելի ուշ այն գրավվում է Կիաքսարի կողմից և մ. թ. ա. 585 թ. պայմանագրով միացվում Մարական տերությանը։

կիմերների ուժեղանալը։ Հենց այս հողի վրա էլ միակցվում են Ասորեստանի ու սկյութների շահերը և նրանք շուտով դառնում են դաշնակիցներ։

Ասորեստանցիների և սկյութների միջև այս մերձեցումը թելադրված էր ոչ միայն Ուրարտուի հզորացմամբ և Փոքր Ասիայում Ասորեստանի շահերին սպառնացող վտանգով, այլև Ասորեստանյան տերության ներքին քաղաքական խիստ սրված դրությամբ։ Ի. Մ. Դյակոնովի հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ դժվարություններից օգտվում են մարերը։ Մարերի առաջնորդ Դեյոկայի որդին կամ թոռը՝ Խշատրիտան (ասսուրական աղբյուրներում՝ Կաշտարիտի, 673—652)[84] մ. թ. ա. 673 թ. մարտ-ապրիլ ամիսներին ապստամբում է Ասորեստանի և Մանայի թագավոր Ախշերիի դեմ և անցնում Ասորեստանին ենթակա մարական երեք նահանգների գլուխ։ Խշատրիտան հռչակում է նրանց անկախությունը և դառնում Մարական պետության հիմնադիրը[85]։ Նրա կենտրոնն է դառնում ներկայիս Համադանը՝ Սիլխակի կամ Կար-Կաշշի ամրոցը, որը մինչ այդ ասորեստանյան զորահրամանատարի նստավայրն էր[86]։

Թվում էր, թե Ասորեստանի դրությունը ճակատագրական է։ Ասորեստանը, մի կողմից, պետք է պաշտպաներ իր քաղաքական դիրքերը Փոքր Ասիայում ուրարտացիների և կիմերների սպառնալիքից, մյուս կողմից նա պետք է պաշտպաներ իր հյուսիս-արևելյան սահմանները Իրանական սարահարթում՝ միմյանց հետ դաշնակցած սկյութներից, մանացիներից և նրանց հարած մարերից։ Եվ բացի այդ, այս ճակատագրական պահին երկրի ներսում սկսվում է ստրուկների և կախյալ երկրագործների զանգվածային փախուստը դեպի հարևան երկրները։ Այս ամենին զուգընթաց սպառնալից վիճակ էր ստեղծվել արևմուտքում և հարավ-արևմուտքում՝ Փյունիկիայում, իսկ պատերազմը Եգիպտոսի հետ դեռ ավարտված չէր։

673 թ. վերջին սկյութների, մանացիների և մարերի դաշնակցային զորքերը սկյութների «թագավոր» Իշպակայիի գլխավորությամբ ներխուժում են Ասորեստան, հավանաբար Կելիշինի լեռնանցքով։ Տեղի ունեցած ճակատամարտում սկյութների Իշպակայի «թագավորն» սպանվում է[87]։

Սկյութների և նրանց դաշնակիցների՝ Մանայի ու Մարաստանի դեմ տարած հաղթանակը հնարավորություն է տալիս Ասորեստանին ռազմական արշավ ձեռնարկել դեպի Արմե-Շուպրիա, ուր ապաստան էին գտնում Ասորեստանից և Ուրարտուից դժգոհ տարրերը։ Այս հարցում Ասարխադդոնը գործում էր Ռուսա II-ի հետ համերաշխ։ Արմե-Շուպրիա էին փախչում ոչ միայն Ասորեստանի, այլև Ուրարտուի ստրուկներն ու կախյալ երկրագործները։ Այդ պատճառով էլ Ռուսա II-ը աջակցում է Ասարխադդոնի արշավանքին դեպի Արմե-Շուպրիա 673 թ. նոյեմբեր-դեկտեմբերին[88]։ Ասորեստանը գրավում է այդ եր-

---

84 Ի. Մ. Դյակոնովը ենթադրում է, որ Խշատրիտա-Կաշտարիտին հիշատակվում է Հերոդոտի մոտ (I, 102) Ֆրաորտա անունով։ Տե՛ս Ի. Մ. Դ յ ա կ ո ն ո վ, նշվ. աշխ., էջ 275—276, 282, 288։

85 АВИИУ, № 68 (Г), ВДИ, 1951, № 3, էջ 224—228, 299, ծան. 21։ Նույն տեղում, № 69, էջ 231, ծան. 5, և № 71, էջ 235, ծան. 39։ Ի. Մ. Դ յ ա կ ո ն ո վ, նշվ. աշխ., էջ 266—271, 273—274։

86 ВДИ, 1953, № 3, էջ 228 և ծան. 8։

87 АВИИУ, № 65, ВДИ, 1951, № 3, էջ 216, ծան. 9, տե՛ս նաև Ի. Մ. Դ յ ա կ ո ն ո վ, նշվ. աշխ., էջ 272։

88 Ի. Մ. Դ յ ա կ ո ն ո վ, նշվ. աշխ., էջ 271, ծան. 3։

կիրը, այնտեղ ապաստանած ասորեստանյան և ուրարտական ստրուկներն ու կախյալ երկրագործները վերադարձվում են իրենց տերերին։ Ինչպես տեսնում ենք, 673—672 թթ. Ասարխադդոնը և Ռուսա II-ը բարեկամական հարաբերությունների մեջ էին[89]։

Այս նոր հաղթանակն էլ ավելի է ամրապնդում Ասորեստանի դիրքերը և Ասարխադդոնին հնարավորություն է տալիս բանակցություններ սկսել Խշատրիտայի հետ, մ. թ. ա. 672 թ., սակայն բանակցությունները հաջողությամբ չեն պսակվում[90]։ Ուստի Ասարխադդոնը նույն թվականին բանակցություններ է սկսում «Իշքուզա երկրի թագավորի»՝ հենց նոր գահ բարձրացած Պարտատուայի (673—654) հետ (Հերոդոտի Պրոտոտիոսը)[91]։ Բանակցություններն ավարտվում են հաշտության պայմանագրով, որն ամրապնդվում է Պարտատուայի և Ասարխադդոնի դստեր ամուսնությամբ[92]։

Ասորեստանի և սկյութների մերձեցումը արմատապես փոխում է գոյություն ունեցող քաղաքական իրադրությունը։ Վերացվում է Ասորեստանի քաղաքական գոյությանը սպառնացող հիմնական վտանգը և միաժամանակ ստեղծվում է նոր ռազմական դաշնակցություն՝ ի հակակշիռ Ուրարտուի և կիմերների դաշնակցության։

Սկյութների անցումն Ասորեստանի կողմը արմատապես փոխում է այդ տերության հյուսիս-արևելյան սահմաններում ստեղծված իրադրությունը։ Մարաստանը, որը թոթափել էր Ասորեստանի լուծը սկյութների օգնությամբ, այժմ պետք է պաշտպանվեր նրանցից։ Մանայի թագավորությունը, որ մինչ այդ ինքն էր հարձակվում Ասորեստանի վրա, այժմ հարկադրված էր անհաջող պատերազմ մղել նրա դեմ։

Ասարխադդոնի հաջորդը՝ Աշուրբանապալը (668—638) իր դահակալության սկզբում արշավում է Մանայի թագավորության վրա։ Մանայի թագավոր Ախշերին, զրկված լինելով սկյութների և մարերի օժանդակությունից, պարտություն է կրում, իսկ Մանան ենթարկվում է ավերածության և գերեվարության[93]։

* * *

Փոքր Ասիայում իր կատարած նվաճումներից հետո Ռուսա II-ը աշխատում էր հեռանալ խաղաղ քաղաքականության և ամեն կերպ խուսափում էր նոր պատերազմի մեջ ներգրավվելուց։ Երկու պետություններն էլ՝ Ասորեստանը և Ուրարտուն, շահագրգռված էին պահպանել խաղաղ դրացիական հարաբերությունները, որպեսզի այդ միջոցով կարողանային խուսափել կիմերների և սկյութների արշավանքների սպառնալիքից։ Իրենց պետություններին սպառնացող քոչվոր ցեղերի նկատմամբ Ասարխադդոնի և Ռուսա II-ի վարած քաղաքականության արդյունքը լինում է այն, որ նրանք կարողանում են հեռացնել վտանգն իրենց սահմաններից, ցույց տալով նրանց Փոքր Ասիայի հարստություն երկրների ճամփան։ Մ. թ. ա. VII դարի կեսերին Ասորեստանի և Ուրար-

---

89 Նույն տեղում, էջ 259։

90 АВИНУ, № 68 (Г), ВДИ, 1951, № 3, էջ 228, 229, ծան. 23։

91 Նույն տեղում, էջ 229, ծան. 24։

92 Նույն տեղում, էջ 229, ծան. 25։

93 Ի. Մ. Դյակոնով, նշվ. աշխ., էջ 282—283։ АВИНУ, № 72, ВДИ, 1951, № 3, էջ 237։ Տե՛ս նաև Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 302—304։

տուի սահմաններից հեռու, Լյուդիայում և Փոյուգիայում սկյութների ու կիմերների միջև սկսվում է մի պայքար, որի ընթացքում ջլատվում են երկու մարտնչող կողմերի և հատկապես կիմերների ուժերը։

Սկյութների դեմ մղված պայքարում կիմերներն արդեն չունեին դաշնակից ի դեմս Ուրարտուի, որը ձգտում էր չեզոք քաղաքականության հետևել։ Մ. թ. ա. շուրջ 661 թ. կիմերները ներխուժում են վերջին ժամանակներում հզորացած Լյուդիայի (Աստվածաշնչի «Գոգի երկիրը») սահմանները։ Լյուդիական Գուգգու թագավորը (692—654) Կիլիկիայի և Թարալի հետ դաշնակցած, սյութների և Ասորեստանի աջակցությամբ, շուրջ 660 թ. ջախջախում է կիմերներին[94]։ Սակայն կիմերներին դուրս մղելուց հետո Լյուդիայի թագավոր Գուգգուն խզում է հարաբերությունները Ասորեստանի հետ և 657 թ. դաշինքի մեջ է մտնում Եգիպտոսի Պսամմետիք I (670—616) ապստամբ թագավորի հետ, ուղարկելով նրան հույն վարձկաններ՝ ասորեստանցիների դեմ պայքարելու համար։ Սակայն շուտով «կիմերները նորից ուժեղանում են (հավանական է, որ Բոսֆորի նեղուցով ներթափանցած թրակական տրերների հետ դաշնակցելով)»[95]։ Սրա հետևանքը լինում է այն, որ Գուգգուն այս ճակատագրական պահին զրկվում է Ասորեստանի օգնությունից և ծանր պարտություն կրում։

Մ թ. ա. 657 թ. կիմերները, թրակական տրերների և լիկիացիների աջակցությամբ, ներխուժում են Լյուդիա։ Այդ պայքարում Գուգգուն զոհվում է (654 թ.)։ Դաշնակիցները գրավում են Սարդես մայրաքաղաքի շրջանը և ավերում Եփեսոսյան Արտեմիսի տաճարը[96]։ Դրանից հետո կիմերների առաջնորդ Տուգդամմեն («Լիգդամիս») շարժվում է դեպի Կիլիկիա, որ ենթակա էր Ասորեստանին։ Դրանից օգտվում է լյուդիական նոր թագավոր Արդիսը (654—629)։ Մ. թ. ա. 654 թ. նա դաշինք է կնքում սկյութական թագավոր Մադեսի (654—624) և Ասորեստանի թագավոր Աշուրբանապալի հետ[97]։

Լյուդիայի դաշինքը սկյութների և Ասորեստանի հետ միանգամայն փոխում է պայքարող ուժերի փոխհարաբերությունը Փոքր Ասիայում։ Դրա հետևանքով ստեղծվում է տերությունների մի համադաշնակցություն, որն անխուսափելիորեն պետք է սպառնար Փոքր Ասիայում Ուրարտուի ունեցած տիրություններին։ Այսպիսով, իր ցանկությունից անկախ Ռուսա II-ը նորից ներգրավվում է պատերազմի մեջ։ Իր արձանագրություններում Աշուրբանապալը նշում է կիմերների և ուրարտացիների հակաասորեստանյան գործունեությունը[98]։

Ռուսա II թագավորը, որ միաժամանակ չեզոք էր մնացել, կրկին դառնում է կիմերների դաշնակիցը։ Սակայն այդ դաշինքը ուրարտացիներին դանկալի արդյունքների չի հասցնում։ Ասորեստանյան տերության սահմանի մոտ, Կիլիկիայում տեղի ունեցած ճակատամարտում սկյութների թագավոր Մադեսը շուրջ 653 թ. վճռական հարված է հասցնում կիմերներին և նրանց դաշնակից-

---

94 В. В. Струве, Хронология VI в. до н. э. в труде Геродота, ВДИ, 1952, № 2, էջ 62—67։ И. М. Дьяконов, История Мидии, էջ 284։ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 293։

95 Ի. Մ. Դյակոնով, նշվ. աշխ., էջ 284։

96 Վ. Վ. Ստրուվե, նշվ. աշխ., էջ 65—67։ Տե՛ս նաև АВИИУ, № 72, ВДИ, 1951, № 3, էջ 236—237։ Ի. Մ. Դյակոնով, նշվ. աշխ., էջ 232, ծան. 5, էջ 234, 237, 284։

97 АВИИУ, № 72, ВДИ, 1951, № 3, էջ 237, № 74, էջ 239—246։ Ի. Մ. Դյակոնով, նշվ. աշխ., էջ 284։

98 АВИИУ, № 77, էջ 242։ Ի. Մ. Դյակոնով, նշվ. աշխ., էջ 285։

ներին[99]։ Կիմերներին գլխավորում էին Տուդդամմեն, որն ընկնում է այդ մարտում, և նրա որդին՝ Սանդակշատրուն։

653 թ. պարտությունը ուրարտացիներին զրկում է այնպիսի կարևոր դաշնակիցներից, ինչպիսիք էին կիմերները։ Այս պայմաններում Ռուսա II-ը շտապում է վերականգնել բարեկամական հարաբերությունները Ասորեստանի հետ, որն ինքն էլ ընդառաջ է գնում։ Ասորեստանում վրա էր հասնում քաղաքական ճգնաժամի մի նոր շրջան և այն էլ այնպիսի պայմաններում, երբ նորից մեծացել էր սկյութական վտանգը[100]։

Այս պարտությունից հետո կիմերներն այլևս ուշքի չեն գալիս։ Նրանց չլատված հորդաները նահանջում են հյուսիս և ցրվում են ուշ շրջանի Կապադովկիայի (արևելյան մասը) և Փոքր Հայքի տերիտորիայում, որոնք այդ ժամանակ Ուրարտական պետության կազմում էին։ Այդուհետև Կապադովկիայի տերիտորիան կիմերների անունով նրանց հարևան հայերը կոչում են Գասիրք[101]։ Կիմերները վերջնականապես ջախջախվում են մ. թ. ա. 640 թ., Լյուդիայի թագավոր Ալիատտի կողմից (մոտ. 617—561)[102]։ Մ. թ. ա. 645 թ. հետո գերիշխանությունը Փոքր Ասիայում շուտով անցնում է Լյուդիային[103]։

Այսպիսով, կիմերների գերիշխանությունը, որն այնպիսի բուռն արձագանք է գտել աղբյուրներում, սահմանափակվում է մեկ հարյուրամյակից էլ պակաս ժամանակաշրջանով (720—650 թթ.)։

* * *

Մ. թ. ա. 653 թ., երբ Ասորեստանը զբաղված էր պատերազմով Փոքր Ասիայում, նրա թիկունքում ապստամբվում են՝ հարավում Բաբելոնը, որին հարել էր Մարաստանը, իսկ հյուսիսում՝ Արմե-Շուպրիա, Նաիրի-Խուբուշկիա և Արդինի-Մուսասիր փոխարքայություններն ու կախյալ շրջանները[104]։ Շուտով Ասորեստանից անջատվում է նաև Եգիպտոսը։ Սակայն Ասորեստանը կարողանում է օգտվել Փոքր Ասիայում սկյութների տարած հաղթանակներից և նրանց օգնությամբ դեռևս մի որոշ ժամանակ պահպանում է իր մեծապետական դիրքը։

---

99 Այդ իրադարձության մասին աղոտ տեղեկություններ են պահպանվել Ստրաբոնի մոտ (I, 3, 21)։ Նրա ասելով «կիմերները, որոնց կոչում են նաև տրերներ, կամ էլ նրանց ժողովուրդներից մեկ ուրիշը, հաճախակի ասպատակում էին Պոնտոսի աջ կողմը և նրան կից շրջանները, ներխուժելով մերթ Պափլագոնիա, մերթ էլ նույնիսկ Փոյուգիա... Հաճախ և՛ կիմերները, և՛ տրերները այդպիսի ասպատակություններ էին կատարում. ասում են, որ տրերները (վրիպում է «կիմերների» փոխարեն) և Կորը (նրանց ցեղապետը) ի վերջո դուրս են քշվում կիմերների (վրիպում «սկյութների» փոխարեն) առաջնորդ Մադեսի կողմից. տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, էջ 339, ծան. 9։

100 АВИИУ, № 78, ВДИ, 1951, № 3, էջ 243, ծան. 3։ Վ. Վ. Ստրուվե, նշվ. աշխ., էջ 66։ И. М. Дьяконов, История Мидии, էջ 286, 287։

101 Մովսես Խորենացի, Բ, 280։ Հավանաբար կիմերների մի մասը հետագայում հաստատվում է Սինոպի շրջանում։ Ըստ Հերոդոտի տվյալների (IV, 12) «կիմերները, Ասիայում սկյութներից փրկություն փնտրելով. բնակություն են հաստատում այն թերակղզու վրա, որտեղ այժմ գտնվում է հելլենական Սինոպ քաղաքը»։

102 Ալիատտի գահակալության թվականի մասին տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, էջ 318։

103 Նույն տեղում, էջ 237։

104 Տե՛ս АВИИУ, № 69, ВДИ, 1951, № 3, էջ 231, նույն տեղում, № 71, էջ 236, ծան. 49։

Կիմերների և նրանց դաշնակիցների նկատմամբ սկյութների տարած հաղթանակը հսկայական ազդեցություն է թողնում Առաջավոր Ասիայի երկրների քաղաքական բախտի վրա։ Սկյութները, ըստ երևույթին, տիրանում են այն բոլոր տերիտորիաներին, որոնք մտնում էին Ուրարտական պետության կազմի մեջ։ Ուրարտուից սկյութները ներխուժում են Արմե-Շուպրիա և Հարևան շրջանները, ինչպես նաև Մանա և Մարաստան։ Ըստ Հերոդոտի (I, 104) սկյութները իշխում են Մարաստանում 20 տարի, մի ժամանակահատված, որ Ի. Մ. Դյակոնովի հաշվումներով ընկնում է մ. թ. ա. 652—625 թթ. միջև[105]. Ապստամբած Բաբելոնը, զրկվելով Մարաստանի օգնությունից, մ. թ. ա. 648 թ. պարտություն է կրում։

Մարաստանը, ինչպես նաև Ուրարտուն, 28 տարի հարկատու են լինում սկյութներին և վերջնականապես ազատագրվում են միայն Կիաքսարի գահ բարձրանալուց հետո (625—585)[106]։ Մ. թ. ա. 624 թ. Կիաքսարը ջախջախում է Սկյութական թագավորությունը։ Դրանից հետո սկյութների զգալի մասը, դարձյալ Դերբենդի վրայով, վերադառնում է ետ, դեպի հարավ-ռուսական տափաստանները[107]։ Սկյութների մյուս մասը խառնվում է տեղական ժողովուրդներին։ Սկյութական մի քանի ցեղեր մնում են Հայկական լեռնաշխարհում և ձուլվում հայերին։ Այսպիսով, սկյութների գործունեությունը Առաջավոր Ասիայի երկրներում էլ ավելի կարճատև է լինում, քան կիմերներինը։ Այն շարունակվում է կես դարից ավելի և ընկնում է մ. թ. ա. 680—620 թթ. միջև։

Սկյութների ջախջախումից հետո սկսվում է Կիաքսարի արտաքին նվաճումների ժամանակաշրջանը, որոնց շնորհիվ Մարաստանը վեր է ածվում Առաջավոր Ասիայի մեծ տերության։

Ամփոփելով վերոշարադրյալը, մենք հանգում ենք հետևյալ եզրակացությունների։ Կիմերական և սկյութական հորդաների ներխուժումը Ուրարտուի և Մանայի սահմանները մեծ փոփոխություն է մտցնում Առաջավոր Ասիայի երկրների քաղաքական իրադրության մեջ։ Սկզբնական շրջանում այն հանգեցնում է Ասորեստանին հյուսիսից և հյուսիս-արևելքից սահմանակից երկու պետությունների՝ Ուրարտուի և Մանայի թուլացմանը, մի հանգամանք, որ Ասորեստանին հնարավորություն է տալիս ուշքի գալ և կրկին պայքարի մեջ մտնել իր մեծապետական դիրքի վերականգնման համար։ Այդ դիրքի վերականգնումը նշանակալից չափով կախված էր Հյուսիսային Ասորիքում և Փոքր Ասիայի հարավ-արևելյան մասում Ասորեստանի թագավորի իշխանության կայունությունից, որտեղ Ասորեստանի թուլացման ընթացքում կարողացել էր իր քաղաքական ազդեցությունը հաստատել հզորության շրջան ապրող Փռյուգիան։

Ասորեստանի և Փռյուգիայի միջև մ. թ. ա. VIII դ. կեսից սկսված պայքարը VII դ. բարդանում է Ուրարտուի և կիմերական ու սկյութական քոչվոր հորդաների միջամտության հետևանքով։ Աստիճանաբար այդ պայքարի մեջ հն ներգրավվում Առաջավոր Ասիայի բոլոր երկրները, ներառյալ Էլամն ու Եգիպտոսը, ինչպես նաև ստրկատիրական պետությունների լծի տակ գտնվող սեղերն ու ժողովուրդները։ Այդ պատերազմները ավարտվում են Փռյուգիայի և միմյանց հետ մարտնչող կիմերական ու սկյութական հորդաների ջախջախու-

105 И. М. Дьяконов, История Мидии, էջ 288—289։
106 Նույն տեղում, էջ 288—289։
107 Նույն տեղում. էջ 291—292։

մով, որը պատմության ասպարեզ է դուրս բերում նոր ժողովուրդների՝ մարերին, պարսիկներին և հայերին։ Սրանց հարվածների տակ քայքայվում և կործանվում են երկարատև պատերազմների և դասակարգային պայքարի հետևանքով թուլացած հին արևելյան տերություններ Ասորեստանը և Ուրարտուն

НАШЕСТВИЯ КИММЕРИЙСКИХ И СКИФСКИХ ПЛЕМЕН И БОРЬБА УРАРТУ И АССИРИИ ПРОТИВ КОЧЕВНИКОВ

Академик АН Арм. ССР С. Т. ЕРЕМЯН

(Резюме)

Киммерийские (750—715 гг. до н. э.) и скифские (680—620 гг. до н. э.) нашествия явились немаловажным фактором в изменении политических судеб Передней Азии. Они способствовали дальнейшему упадку и уничтожению древневосточных рабовладельческих государств Урарту и Ассирии и тем самым создали условия для выдвижения на политическую арену новых народов—мидян, персов и армян.

Нашествия кочевых племен в страны Передней Азии еще более обострили назревавшие в древневосточных рабовладельческих государствах социальные и экономические противоречия, которые вызывали новые войны с их резко выраженным грабительским характером. Характер войн и система массового переселения населения завоеванных территорий способствовали углублению процессов этнического дробления и расхождения, смешивания и скрещивания племен, которые, с точки зрения этногонии армян, явились факторами дальнейшей консолидации армянских племен в один народ.

Борьба интересов древневосточных держав по-прежнему велась вокруг стран юго-восточной части Малой Азии и Северной Сирии. Именно здесь находился уже с IX—VIII вв. до н. э. узел международных противоречий древнего мира. В этой части Передней Азии сталкивались интересы Ассирии, Урарту и Фригии, которые стремились быть обладателями ключевых позиций в транзитной торговле железом.

Вторжение киммерийских и скифских орд в пределы Урарту и Маны внесло большие изменения в политическую обстановку стран Передней Азии. В первое время оно привело к ослаблению двух пограничных с Ассирией (с севера и северо-востока) государств—Урарту и Маны, что дало ей возможность оправиться и снова начать борьбу за возвращение своего великодержавного положения. Это в значительной степени зависело от прочности власти ассирийского царя в Северной Сирии и в юго-восточной части Малой Азии, где за время ослабления Ассирии сумела утвердить свое политическое влияние Фригия, переживавшая как раз период своего могущества.

Начиная с середины VIII в. до н. э., борьба Ассирии с Фригией была осложнена вмешательством Урарту и кочевых орд киммерийцев и

скифов. В эту борьбу постепенно вовлекались все государства Передней Азии, включая Элам и Египет, а также находившиеся под игом рабовладельческих государств племена и народности. Именно в этот период на «варварской окраине» Урарту и Ассирии сложилось Армянское государство (в 653—624 гг. до н. э.) и завершился в основном процесс сложения армянского народа.

Эти войны кончились разгромом Фригии и боровшихся между собою орд киммерийцев и скифов. В этот бурный период истории Передней Азии выступили на арену новые народы —мидяне, персы и армяне, под ударами которых распались и были уничтожены ослабленные долгими войнами и классовой борьбой древневосточные державы—Ассирия и Урарту.